



ԵՐԱԺԻՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (162-163) # 7-8 (7-8) հունիս-օգոստոս 2019

ՉԱՐԹՈՆՔ Հուլիսյան ղողանգներ...



Արամ Սուքիասյան, Հորեյլանյան համերգ՝ նվիրված Կոմիտասի և Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին, «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանում

2

ԵՊԿ 2019-2020 թթ. ուսումնական տարվա ընդունելության ֆևստիվները



Սոնա Հովհաննիսյան, Միխայիլ Կոկոժակ, Ծովինար Մովսիսյան, Էռնեստ Մանգուլյան, Լինա Գրիգորյան, Ռուզաննա Ստեփանյան, ԵՊԿ դիմորդներ

Հոդվածը տե՛ս՝ «Երաժիշտ» ամսաթերթի սեպտեմբերի համարում

«Փարոս» երգչախմբի համերգները Փարիզում



«Փարոս» և «Vox Sirenis» կամերային երգչախմբերի համատեղ համերգը Փարիզի Սուրբ Երրորդության տաճարում, դիրիժոր՝ Բեռնարդ Լալմանո

7

ԵՊԿ շրջանավարտներին հանձնվեցին ավարտական դիպլոմները



ԵՊԿ դասախոսներ և շրջանավարտներ Դիպլոմների հանձնման արարողությունը ԵՊԿ-ում

2,3

«ԳԻՔՈՐ» ՕՊԵՐԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ԾՆՈՒՆԴԸ 33 ՏԱՐԻ ԱՆՑ



Տեսարան Ստեփան Զրբաշյանի «Գիքոր» օպերայից, ԵՊԿ, Ղ. Սարյանի անվ. Օպերային ստուդիայի դահլիճ

6

| | | |
|---|--|----|
| ✓ | Հայաստանի Պետական կամերային երգչախմբի կասարմամբ՝ Կոմիտասի երաժշտությունը թեւածեց Թեհրանի «Վահագաթ» դահլիճում | 4 |
| ✓ | Մարգարիտ Սարգսյանի համերգները Իսպանիայում | 4 |
| ✓ | «Ալեգանտիվ մասնագիտականը՝ առաջանում է միամիտ, չհիմնավորված հիպոթեզների վստահը» | 5 |
| ✓ | Կոմիտասը Հայրենիք է, տուն է, հող... | 6 |
| ✓ | «Փարոս» երգչախմբի համերգները Փարիզում | 7 |
| ✓ | Նոր ուսումնասիրություն Լոնո Բարբազանյանի մասին | 8 |
| ✓ | Տասնմեկ նոր առևու՛ն՝ թեմիս | 9 |
| ✓ | ЮНЫЕ МУЗЫКАНТЫ НА ФЕСТИВАЛЕ В БУРГОСЕ | 10 |
| ✓ | Դասարանական համերգ «Կոմիտաս 150» | 11 |

ԶԱՐԹՈՆՔ Հուլիսյան դոդանգներ...



Օրերս «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանում կայացավ հորեանական համերգ՝ նվիրված Կոմիտասի և Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին:

Նախագիծն իրականացվեց ՀՀ կրթության և գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ և Կամերային երաժշտության ազգային կենտրոնի նախաձեռնությամբ (պրոդյուսեր՝ Նորայր Նազարյան, գեղարվեստական մասի պատասխանատու՝ Արմեն Սուքիասյան, տեսանյութերի և սցենարի հեղինակ՝ Արամ Սուքիասյան, գեղարվեստական մասի համակարգող՝ Ֆելիքս Բաբուրյան):

Համդիտությունը կազմակերպված էր պատշաճ մակար-



Սոֆյա Սայադյան, Հայաստանի պետական կամերային նվագախումբ, դիրիժոր Ռոբերտ Սլքեյան

դակով: Երեկոն հազեցած էր ծանրակշիռ և բազմաոճ ծրագրով:

Սիվալասիկ, համերգը բացեց Հայաստանի պետական կամերային երգչախումբը: Ընթացքում հնչեցին Մեծն Վարդապետի «Օրոր Ադինո», «Հարսանեկան երգերի, Շար 1», «Սոնա յար» (մենակատար՝ Սոֆյա Սայադյան), «Գութաներգ» խմբերգերը (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Ռոբերտ Սլքեյան):

Իսկ Կոմիտասի «Կռունկը»՝ Նիկոլայ Մադոյանի վեհաշուք կատարմամբ, տարածվելով հոծ հանրության եթերային մթնոլորտում, կանխորոշեց ողջ երեկոյի ընդհանուր տրամադրությունն ու եռանդը:

Նրբագեղ էին նաև Կոմիտասի «Երանգի», «Շուշիկի» դաշնամուրային պարեղանակները՝ Վահան Մարտիրոսյանի կատարմամբ:

Հետագա համերգային թատերագիծը զարգացավ նոր, հետաքրքիր կոմիտասյան ելևէջներով:

Այսպես, Հայաստանի պետական կամերային նվագախմբի կատարմամբ (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Վահան Մարտիրոսյան) լսարանին հանրամատչելի դարձան Կոմիտասի «Հոյ Նազան», «Հով արեք սարեր ջան» (մենակատար՝ Մավր Սկրտչյան), «Քելե, քելե» երգերի բարձրորակ մշակումները:


Հիրավի, Վաչե Շարաֆյանի «Երկու երգ» Կոմիտասի թեմաներով (մենակատար՝ Արտակ Ասատրյան, դուդուկ) և Մելիք Մավիսակալյանի «Կոմիտասական» խորհրդանշուն էին Մեծն Կոմիտասի աշխարհըմբռնումները. սեր, մաքրություն, ներդաշնակություն...

Համերգային երկժամյա ծրագիրը փոխլրացվեց ևս մի հետաքրքրաշարժ և պատկերավոր տեսարանով:

Գառնիի սյունազարդ և անասան Մայր տաճարի բեմում էր Հայաստանի «Հովեր» պետական կամերային երգչախումբը (խմբավար՝ Սոնա Հովհաննիսյան):

Հուզավառ, լուսային ներգործությունների հետևանքով «Հովեր» կատարմամբ իրականացվեց Կոմիտասի «Կաքավիկ», Ռոմանոս Մելիքյանի «Վարդ», «Ախ ինչ լավ են» (մշակումը՝ Միքայել Կոկոժակի), Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից հատվածներ և այլ կոմպոզիտորների երկեր՝ կլանելով հանդիսատեսին դեպի թումանյանական բանաստեղծական աշխարհը, դեպի լինելիությունն ու ազգային պաթոսը:

ՆԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
երաժշտագետ,
ԵՊԿ թանգարանի վարիչ



Հայաստանի պետական կամերային նվագախումբ, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Վահան Մարտիրոսյան, «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանում



Նիկոլայ Մադոյան, Հայաստանի պետական կամերային երգչախումբ, գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Ռոբերտ Սլքեյան



Ամալյա Թորոսյան, Նարինե Ռսկանյան, Հայաստանի «Հովեր» պետական կամերային երգչախումբ, խմբավար՝ Սոնա Հովհաննիսյան
Հայաստանի պետական կամերային նվագախումբ, դիրիժոր Վահան Մարտիրոսյան




Գարեգին Սարգսյան (Կամերային երաժշտության ազգային կենտրոնի փոխտնօրեն), Ռոբերտ Սլքեյան (Հայաստանի պետական կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր), Վահան Մարտիրոսյան (Հայաստանի պետական կամերային նվագախմբի դիրիժոր), Սոնա Հովհաննիսյան («Հովեր» պետական կամերային երգչախմբի խմբավար), Նորայր Նազարյան (Կամերային երաժշտության ազգային կենտրոնի տնօրեն)

ԵՊԿ շրջանավարտներին հանչնվեցին ավարտական դիպլոմները



Սոնա Հովհաննիսյան



Ծովինար Մովսիսյան



ԵՊԿ դասախոսներ և շրջանավարտներ

Հուլիսի 16-ին, տեղի ունեցավ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի 2018-2019 ուսումնական տարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը: Այս տարի կոնսերվատորիան ունեցավ բակալավրական՝ 145 և մագիստրոսական կրթության՝ 69 շրջանավարտ: Ողջույնի խոսքով հանդես եկավ ԵՊԿ ղեկավար Սոնա Հովհաննիսյանը, որը շնորհավորեց և բարի երթ մաղթեց շրջանավարտներին: Ողջունեցին նաև Գիտական գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը, ուսումնական գծով պրոռեկտոր Արամ Հովհաննիսյանը, ուսումնական մասի վարիչ Նոնա Ռսկանյանը և ԵՊԿ դասախոսներ: Ավարտա-

հանդեսին, որը շատ ջերմ և անմիջական ընթացք ունեցավ, գեղեցիկ կատարումներով հանդես եկան ԵՊԿ շրջանավարտներ և ուսանողներ: Տոնական մթնոլորտում հուզված էին բոլորը՝ բուհի եկեղծը և պրոռեկտորները, շրջանավարտները, ծնողները, ղեկանները, ամբիոնների վարիչները, դասախոսները, նրանք ջերմ խոսքեր էին փոխանակում, անկեղծամուն, շնորհավորում միմյանց: Բոլորը և՛ մասնակից էին, և՛ օրվա հերոս, և՛ հանդիսական:

Ավարտողները մեծ ոգևորությամբ ու սրտի թրթիռով էին մասնակցում այս՝ կյանքում միշտ հիշվող իրադարձությանը, որովհետև կարելի էր ասել, այդ վայրկյանից նրանք մտ-

նում են կյանքի նոր և առավել պատասխանատու փուլ: Նրանք քայլ են անելու ծառայեցնել իրենց ձեռք բերած գիտելիքները հայ հասարակության զարգացմանն ու առաջընթացին, նոր սերնդի կրթմանը, ոչ միայն մասնագիտական, այլ նաև բարոյական:

Բարի երթ, հաջողություններով ու վերելքներով ճանապարհ ձեռք, սիրելի՛ շրջանավարտներ:

ՆՐԱՄԵՆ ԱՅՈՅԱՆ
երաժշտագետ

ԵՊԿ շրջանավարտներին հանձնվեցին ավարտական դիպլոմները



Սոնա Դովհաննիսյանը շնորհավորում է շրջանավարտներին, Ռուբեն Ոսկանյան, <....>

Էդուարդ Դրմուշյան, ԵՊԿ 1-ին կուրս ընդունված ուսանող

ԵՊԿ ուսանողներից և շրջանավարտներից կազմված վոկալ անսամբլ, խմբավար Լիլիթ Շահվերդյան



Ռուբեն Ասատրյան, Փագիկ Խաչատրյան (ակադեմիական երգեցողության բաժնի շրջանավարտ)

Արտյոմ Դարոբյուկյան

Անի Խաչունց, Տիգրան Պետրոսյան



Դավիթ Ղազարյան, Բնարիկ Բարաջանյան (խմբավարության բաժնի շրջանավարտ)

Արամ Դովհաննիսյան, Վահագն Վարդանյան (կոմպոզիցիայի բաժնի շրջանավարտ)

Էդմոնդ Դովհաննիսյան (նվագախմբային ֆակուլտետի շրջանավարտ), Ռուբեն Սմբատյան



Լուսինե Շահազիզյան (Լարային բաժնի շրջանավարտ), Արամ Դովհաննիսյան

Լուսինե Սահակյան, Լիանա Եղիազարյան (երաժշտագիտության բաժնի շրջանավարտ)

Սոնա Ոսկանյան, Երգեցողության բաժնի շրջանավարտներ՝ Տաթևիկ և Սաթենիկ Անտոնյաններ



Նարինե Զարիֆյան, Անահիտ Պետրոսյան (եստրադային-ջազային բաժնի շրջանավարտ)

Փողային բաժնի շրջանավարտներ՝ Թելման Մխոյան, Արթուր Քոչարյան

ԵՊԿ պրոֆեսորների և դասախոսների մադրանքները 2019 թվականի շրջանավարտներին

Մարգարիտ Սարգսյանի համերգները Իսպանիայում

Հունիսի 27-ից հուլիսի 2-ը Իսպանիայի Լորետ դե Մառուն քաղաքում կայացավ XXXVII միջազգային «Chorus inside» մրցույթ-փառատոն, որին մասնակցեցին ԵՊԿ սաները և: Դա մեծ մասամբ երգչախմբային մրցույթ էր, բայց ուներ նաև դասական, էստրադային երգեցողություն, հեղինակային երգի նոմինացիաներ: Հանձնաժողովի կազմում էին՝ խմբավար Պասկուալե Վելենոն (Իտալիա), խմբավար և կոմպոզիտոր Ռայմոն Բոմանին (Իսպանիա) և երգչուհի, ԵՊԿ դոցենտ Աննա Պողոսյանը:

Հայաստանը ներկայացնում էին Աննա Խաչատրյանը (դաս. Լիանա Վարդանյան), Դիանա Այվազյանը (դոցենտ Ա. Պողոսյան), Մարիցա Թիլիկյանը, որը Աննա Սիմվոյանի հետ միասին փայլուն ելույթ ունեցան էստրադային նոմինացիայում: Դասական երգիչներին նվազակցում էր ԵՊԿ պրոֆեսոր Մարգարիտ Սարգսյանը: Բոլոր մասնակիցները ցուցաբերեցին բարձր պրոֆեսիոնալ մակարդակ և արժանացան ոսկե մեդալների, իսկ Աննա Խաչատրյանը նաև ստացավ հատուկ մրցանակ, որպես մեծ ապագա ունեցող երիտասարդ երգչուհի: Մարգարիտ Սարգսյանը արժանացել էր լավագույն դաշնակահարի դիպլոմին և մասնակցելով հեղինակային երգի նոմինացիային արժանացավ 2-րդ մրցանակի:

Ընդհանրապես, երբ ելույթ են ունենում միջազգային մրցույթներին, փառատոներին, դա մեծ պատասխանատվություն է, որովհետև ներկայացնում են քո երկիրը և քո բուհը:

Մեծ ներկայացուցիչներ կային Ռուսաստանից, Ղազախստանից, Մոլդովայից, Լեհաստանից, Իտալիայից և այլն և մեր փոքր խումբը Հայաստանից:

Ինչքան հաճելի էր լսել իտալացի դիրիժոր, հանձնաժողովի նախագահից Պ. Վելենոյից շնորհակալական խոսքեր բարձր որակի և մակարդակի մասին, որոնք ցուցաբերեցին հայ կատարողները: Նա խոստովանեց, որ զարմացած էր այն իտալական երգեցողական դպրոցի համար, որը չէր սպասում լսել հայ երիտասարդ երգչուհիներից, նշելով ևս դաշնակահար Մ. Սարգսյանի նվազակցության չափազանց բարձր վարպետությունը: Փակման արարողության ժամանակ սուրբ Մարիան եկեղեցում ելույթ ունեցավ Աննա Պողոսյանը Մարգարիտ Սարգսյանի հետ միասին, և մեր երեք ոսկե մեդալակիրները՝ Ա. Խաչատրյանը, Դ. Այվազյանը և Մ. Թիլիկյանը խորանի մոտ կատարեցին «Տեր ողորմյա»: Ազգը գոյություն ունի իր մշակույթով:

Մարտակերտի Ալեքսեյ Հեփմանի անվ. արվեստի դպրոցի նախկին սանը Իսպանիայի Լորետ դե-Մար քաղաքում երգի միջազգային փառատոնում գրավել է 1-ին տեղը

Մարտակերտի Ալեքսեյ Հեփմանի անվ. արվեստի դպրոցի նախկին սան Աննա Խաչատրյանը այժմ սովորում է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ակադեմիական երգեցողության բաժնում:

Նա միշտ մասնակցում է տարբեր մրցույթների և արձանագրում մրցանակային տեղեր:



Դիանա Այվազյան, Մելանի Սիվոյան, Աննա Սիվոյան, Աննա Պողոսյան (ԵՊԿ դոցենտ), Աննա Խաչատրյան, Մարգարիտ Սարգսյան (ԵՊԿ պրոֆեսոր), Մարիցա Թիլիկյան



Մ. Սարգսյանի մրցանակները՝ լավագույն կոնցերտմայստեր՝ երաժիշտ և արժաբե մեդալ հեղինակային երգի նոմինացիայով, երգերի բառերի հեղինակն է Արմեն Աշոտյանը



Աննա Խաչատրյան



Մելանի Սիվոյան

Հունիսի 29-ին մա մասնակցել է Իսպանիայի Լորետ դե-Մար քաղաքում կայացած «Chorus inside» միջազգային փառատոնին և զբաղեցրել 1-ին տեղը:

Երգչուհին իր այդ մեծ հաղթանակի համար պարգևատրվել է հաղթության գավաթով, երկուական դիպլոմով ու մեդալով՝ և՛ առաջին տեղի, և՛ հատուկ մրցանակի, որպես տաղանդավոր երգչուհի:

Նա հուլիսի 5-ին Երևանում մասնակցել է դասարանական համերգին և կրկին փայլել իր տաղանդով:

Աննա Խաչատրյանը Մարտակերտի արվեստի դպրոցում սովորելու ժամանակ ևս արձանագրել է հաղթանակներ, որի համար մեծ դեր են խաղացել նաև նրա ուսուցիչները, իսկ այս մեծագույն հաղթանակների համար մեծ դեր ունեն նրա դասախոս Լիանա Վարդանյանը և նվազակցող Մարգարիտ Սարգսյանը:

Խմբագրական

Հայաստանի Պետական կամերային երգչախմբի կասարմամբ՝ Կոմիտասի երաժշտությունը թեւաճեց Թեհրանի «Վահրաբ» դահլիճում

Հայաստանի Պետական կամերային երգչախումբն իր հրաշալի կատարմամբ Թեհրանի «Վահրաբ» դահլիճում հնչեցրեց Կոմիտասի բացառիկ ու անկրկնելի երգն ու երաժշտությունը:

Այն ամենն ինչ կարելի է ասել մի ելույթի մասին, որը երկու ժամ լեփ-լեցուն դահլիճի ունկնդիրներին գամել էր աթոռներին, իսկ աւարտին արդեն չէր դադարում ծափողոյնների տարափը:

Իրանում Հայաստանի Հանրապետության դեսպանության կազմակերպությամբ եւ Իսլամական մշակույթի ու առաջնորդության նախարարության, նաեւ «Ռուդաբի» մշակութային ու գեղարվեստական հիմնարկի համագործակցությամբ, հուլիսի 21-ի, մեկնարկեց Հայաստանի Պետական կամերային երգչախմբի երկօրեայ համերգի առաջին ծրագիրը նվիրած Կոմիտասի ծննդեան 150-ամեակին: Սկզբում մայեստրո Ռազմիկ Օհանեանը լսարանին ներկայացրեց Կոմիտասին, եւ նրա կենսագրական տւեալների ընդմիջից՝ Հայոց Ցեղասպանության արհաւիրքը, որը աշխարհին զրկեց Կոմիտասի ստեղծագործական տաղանդից:

Ապա բեմահարթակ հրաւիրեց Հայաստանի Պետական կամերային 30 հոգանոց երգչախումբը, հանրայայտ Ռոբերտ Մլքեանի գեղարվեստական ղեկավարությամբ եւ գլխավոր դիրիժորությամբ ու մեներգային եւ երգչախմբային աննախադէպ կատարումներով հանդիսատեսին հաղորդակից դարձրեց Կոմիտասի մշակումներին: Միջոցառումը նաեւ մերթընդմերթ զուգորդում էր դաշնամուրային կատա-



Հայաստանի կամերային երգչախումբը Թեհրանում

րումներով:

Համերգին ներկայ էին՝ Թ. Հ. թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանը, Իրանում Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանները, Իսլամական խորհրդարանում իրանահայ պատգամաւորները, Թ. Հ. Թեմական խորհրդի ներկայացուցիչներ, Իրանում Հայ կաթողիկէ համայնքի առաջնորդը, պետական հրաւիրեալներ եւ արւեստասեր հոծ բազմութիւն:

կան այն գոհարները, որոնք Տիգրան Մանուրեանը ստեղծել է հայանուն հանճարեղ բանաստեղծների՝ Յ. Թումանյանի, Ա. Իսահակեանի, Ե. Չարենցի, Կ. Չարեանի խօսքերի հիման վրայ:

Ալեկի քան երկու ժամ հանդիսատեսը ակնդէտ հետեւում էր իւրաքանչիւր հնչիւնի կատարողականութեանը եւ նոյն ապրումներով վերջում ծափահարում:

«Անգաճեցող մասնագիտականը՝ առաջանում է միամիտ, չհիմնավորված հիպոկրիզների վստահը»
Հարցազրույց երաժշտագետ Ծուլան Հյունունցի հետ



Ծուլան Հյունունցի

Երիտասարդ երաժշտագետ Ծ. Հյունունցի, 2011-ին ավարտելով ԵՊԿ համապատասխան բաժինը, ուսումը շարունակել է Քյոլնի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի երաժշտագիտության ինստիտուտում: Ավարտական թեզի թեման է «Հնչյունի փիլիսոփայությունը Զ. Շելլի-ի նվագախմբային ստեղծագործություններում»: Այժմ աշխատում է թեկնածուական թեզի վրա՝ նվիրված սպեկտրալ երաժշտության հիմնադրողների մեկի՝ Զ. Ռադկլեյկի արվեստին: 2017-ից դասավանդում է Քյոլնի համալսարանի երաժշտական էթնոլոգիայի և ժամանակակից երաժշտության բաժիններում: Գիտական ու դասախոսական աշխատանքն էլ «զարգարում» է երաժշտա-հասարակական գործունեությանը, որի շրջանակներում պարբերաբար լինում է Հայրենիքում: 2019-ի մարտին Երևանում Ծուլանի համահեղինակմամբ և մասնակցությամբ իրականացվեց երաժշտական մի քանի հիշարժան նախագիծ: Հենց այդ ժամանակ էլ ծնվեց նրա երաժշտագիտական բազմակողմանի գործունեությունը բացահայտելու գաղափարը, և ահա, «Երաժիշտ» ամսաթերթի ընթերցողներին ենք ներկայացնում խոստացված հարցազրույցը:

- Ծուլան, երաժիշտների ընտանիքում մասնագիտության ընտրությունը նախանշված էր թեզ համար, թե՛, այնուամենայնիվ, ներքին մղում էր...

- Դա ներքին մղում էր՝ միանշանակ ազդված ընտանիքում տիրող մթնոլորտով: Կարծում են, ամենամեծ ազդեցությունն ինձ վրա թողել են պարբերական այցերը կոնսերվատորիա դեռևս մանկական տարիքում: Տատիկս՝ ժամնա Ջուրաբյանը, ինձ հաճախ էր բերում իր դասախոսություններին: Թեև այն ժամանակ ամեն ինչ չէր, որ հասկանում էի, ինձ շատ էր գերում կոնսերվատորիայի մթնոլորտը, շենքը, հատկապես՝ առաջին հարկի տուֆագույն պատը, ուսանողներից ամկայծող հմայքը, «դասախոսություն» ասվածն առհասարակ: Նման մանկական տպավորությունները հետագայում ենթագիտակցորեն ազդում են մեր գիտակից որոշումների վրա...

- Հասցրե՞լ են կտրել կարծրատիպերը երաժշտագետների մասին...

- Ինձ այդ կարծրատիպերը ծանոթ են, բայց երբևէ չեն եղել դրանց կրողը: Սեփական մասնագիտության պատերի մեջ փակվելու վտանգը սպառնում է ամենուր, ցանկացած ոլորտում: Հակառակ կողմում սպառնում է մեկ այլ՝ «մասնագիտական ամենակերտություն» վտանգը, երբ անսպասելի մեկը մյուսին արագորեն հաջորդող հետաքրքրությունների պոստամոնում կարելի է սայթաքել դիլետանտիզմի դաշտ: Ամեն դեպքում, անհրաժեշտ է ունենալ բազմակողմանի հետաքրքրություններ, աշխուրջ լինել արվեստի և գիտության այլ տեսակների զարգացումների և այդ ոլորտներում ձեռք բերած փորձառությունը տեղափոխել սեփական դաշտ:

Ի դեպ, շատ զգայուն թեմա են շոշափում. ո՞րն է երաժշտագետ մասնագիտությունը, որտե՞ր են սկսում և վերջանում սահմանները, և ո՞ր ոլորտներում է տեղի ունենում դրա իրացումը:

Ժամանակակից իրականությունը շատ ավելի մեծ ճկունություն և հնարամտություն է պահանջում այս մասնագիտությունից, քան օրինակ, մեր ավագ սերնդի դասախոսների ինքնակայացման տարիներին: Բայց սա երևի առանձին գրույցի, անգամ կլոր սեղանի թեմա է...

- Ըն մեջ երբևէ վիճո՞ւմ են ունկնդիրն ու մասնագետը:

- Երբեք: Կարծում են, մեր մասնագիտության մեջ ունկնդիրն ու մասնագետը պետք է անբաժան լինեն: Տարանջատման արդյունքում առաջանում են արտոտակտ, իրականությունից և լսողական փորձից կտրված քննադատություններ կամ կարծիքներ, երբ ապավինում ենք միայն մեր ինտելեկտուալ, մասնագիտական կարողություններին: Եվ հակառակը, անջատելով մասնագիտականը՝ առաջանում է միամիտ, չհիմնավորված հիպոկրիզների վտանգը: Երաժշտության զգացմունքային, «ականջով» ընկալումը պետք է համատեղվի ինտելեկտուալ հմտությունների հետ:

- Երաժշտագետի սեղանի գիրքը...

- Չեն կարող բոլոր երաժշտագետների անունից խոսել, մասնավոր, եթե ի նկատի ունենանք այն ուղղությունների բազմազանությունը, որոնցով կարող է զբաղվել երաժշտագետը: Իմ սեղանի գիրքն է Ռիչարդ Տարուսկիի «The Oxford History of Western Music» հատորակը: Այն հանրագիտարանային բնույթ ունի, շատ սեղմ է, հագեցած, միևնույն ժամանակ՝ գրավիչ, գրված գրեթե գրական ոճով: Տարուսկինը կարողանում է նույնիսկ երաժշտական ամենաբարդ ֆենոմենները նկարագրելու երկու հակիրճ նախադասությամբ արտահայտել ամենակարևորն ու էականը:

- Ի՞նչ զուգահեռներ կանցկացնես Հայաստանի և Գերմանիայի երաժշտագիտական դպրոցի, սկզբունքների միջև: Ըստ այդմ, ի՞նչը կփոխեիր մեր երաժշտական կրթական համակարգում:

- Երկու դպրոցներում էլ առկա են թե՛ դրական, թե՛ բացասական կողմեր: Հիմնական տարբերությունը թերևս նրանում է, որ Գերմանիայում երաժշտագիտությունը ձևավորվել է որպես փիլիսոփայական առարկա: Ժամանակակից գերմանական երաժշտագիտության հիմնադիրն է համարվում փիլիսոփա Թեոդոր Ադորնոն, որը երաժշտական երևույթները դիտարկում էր փիլիսոփայական տեսանկյունից: Գուցե դա է պատճառը, որ Գերմանիայում երաժշտագիտությունն առաջին հերթին համալսարանական առարկա է: Բացի այդ, այստեղ առանց այդ էլ սուղ մասնագիտությունն ավելի է տրոհվում: Երաժշտական քննադատությունը գրեթե դուրս է մնում երաժշտագետի գործունեությունից: Այն համարվում է ավելի ազատ, ոչ գիտական և էսսեիստական ճյուղ, որով զբաղվում են երաժշտական նախնական կրթություն կամ հետաքրքրություններ ունեցող լրագրողները, էսսեիստները: Բացի այդ, կա նաև շատ ավելի հստակ սահմանագիծ բուն երաժշտագիտության և երաժշտության տեսության միջև: Մինչդեռ երաժշտագիտությունը դասավանդվում է համալսարանում՝ ընդգրկելով պատմական և ժամանակակից ճյուղեր, երաժշտական էթնոլոգիա, մեդիաներ և այլ ուղղություններ: Երաժշտության տեսությունն էլ ուսուցանվում է կոնսերվատորիաներում (Musikhochschule): Ի տարբերություն Գերմանիայի, Հայաստանում երաժշտագիտությունը, բացառությամբ հոգևոր և ազգային ոլորտների, զարգացել է ֆրանսա-ռուսական ավանդույթներով, որոնց բնորոշ են մասնագիտական ճյուղերի, թեմաների լայն ընդգրկումը, տեսության և գեղագիտության ավելի սերտ կապը: Այն նաև նպաստում է երաժշտագետների, տեսաբանների առավել արդյունավետ շփմանը կոմպոզիտորների, կատարող-երաժիշտների հետ: Կենսական շփում, առանց որի երաժշտագիտությունը կարող է կորցնել կապը իրականության հետ, դառնալ զուտ ակադեմիական, արտոտակտ գիտություն:

Կուզե՞նայի մշտ գերմանական երաժշտագիտական կրթության և երկու առանձնահատկություն, որոնք, ըստ իս, հետաքրքիր և օգտակար կլինեն փորձարկել Հայաստանում: Առաջինը դա մեկնագամյա, չկրկնվող սեմինարներն են՝ մեկ կիսամյակ տևողությամբ: Բուհերում գոյություն ունեն երկու տիպի դասընթացներ. շարունակական, տարեց տարի կրկնվող հիմնական առարկաներ, օրինակ՝ պատմական երաժշտագիտության սկզբունքներ, վերլուծություն, հարմոնիա և այլն, և մեկնագամյա սեմինարներ՝ նվիրված մեկ կոմպոզիտորի կամ երաժշտական երևույթի խորացված ուսումնասիրմանը: Դրանք թույլ են տալիս խորքային անդրադարձ կատարել ընդհանուր կուրսում տեղ չզտած նյութերին:

Հայաստանում և Գերմանիայում էապես տարբերվում է նաև երաժշտական էթնոլոգիայի դասավանդումը: Եվրոպական համալսարաններում տվյալ առարկան ընդգրկում է ոչ միայն սեփական, այլև այլ ազգերի երաժշտական ավանդույթների ուսումնասիրումը: Օրինակ՝ Քյոլնի համալսարանում պարբերաբար անցկացվում են սեմինարներ ճապոնական, հնդկական, իրանական, ինդոնեզական և այլ երաժշ-

տական մշակույթների վերաբերյալ, որոնք հաճախ ուղեկցվում են գործնական պարայմունքներով: Այդ ծրագրի շրջանակում են երկու անգամ պատիվ են ունեցել ներկայացնել հայկական երաժշտությունը: Բացի ավանդական մշակույթներից, մեծ տեղ է հատկացված ջազի, փոփի, ռոքի, տեխնոյի տարբեր դրսերումների գիտական ուսումնասիրմանը:

Մեկ այլ կարևոր դաշտ է էլեկտրոն-ակուստիկ երաժշտությունն իր ենթաժանրերով՝ կոնկրետ երաժշտություն, ակուզմատիկ երաժշտություն, sound-scape, հնչյունային ինստալացիա, ընդհուպ մինչև մերօրյա զարգացումները: Այսօր նաև Հայաստանում է ավելանում այն երիտասարդ կոմպոզիտորների թիվը, որոնք ստեղծում են էլեկտրոնային երաժշտություն, և համակարգված գիտելիքները տվյալ ոլորտում անհրաժեշտ են թե՛ կոմպոզիտորներին, թե՛ երաժշտագետներին:

- Կերչին տարիներին քո գործունեության մեջ կարմիր թելով անցնում է «Արտկոնցեպտ միջազգային ասոցիացիա» մշակութային հասարակական կազմակերպությունը, որի համահիմնադիրն ու մասնակիցն ես...

- Իմ մասնակցությունը «Արտկոնցեպտ»-ին կայանում է առանձին նախագծերի կուրացիայի, գեղարվեստական կոնցեպտավորման կամ հեղինակման տեսքով: Իսկ «Արտկոնցեպտ»-ի նպատակներից մեկն է ստեղծել միջազգային համագործակցության ճյուղն ցանց, որը հնարավորություն կտա հայկական արվեստը ներկայացնել արտասահմանում, ինչպես նաև միջազգային մշակույթի մշակակալի երևույթները՝ Հայաստանում, ստեղծագործությունների կատարումների, արվեստագետների անհատական այցերի, ցուցահանդեսների, դասախոսությունների և այլ նախաձեռնությունների միջոցով: Որպես միջազգային համագործակցության օրինակ կարող են մշտել «Հայկական վիոլա» շարունակական համերգային նախագիծը Մյունխենում, Բեռլինում, Երևանում: Հատուկ այս նախագիծն համար մի շարք գերմանացի կոմպոզիտորներ ստեղծագործություններ են գրել հայկական վիոլայի համար, որոնք կատարվում են Գրիգոր Առաքելյանի կողմից: Հիշարժան է «Յուրի Հայրապետյան 75» միջազգային երաժշտական փառատոնը Երևանում, որին մասնակցում էին պրոֆեսորի անվանի սաները Հայաստանից, Բուլղարիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից: Կնշե՞մ նաև «ՕՊՈՍ» փառատոնը, որի շրջանակներում երաժշտությանը զուգահեռ ներակայացվում են լուսանկարչությունը, գրականությունը, կերպարվեստը, «Երևան-2800» միջոցառումների շարքը, և այլն: Ներկայումս ընթացքի մեջ է մի մեծ նախագիծ Մյունխենի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ: Կոմպոզիտոր Արսեն Բաբաջանյանի կողմից ստեղծվում է կամերային օպերա՝ Արամ Պաչյանի «Յուսուբյուն, Ծիտ» վեպի հիմքով: Ստեղծագործական կազմում են նաև գրողը, անհիմատոր Եվա Մուրադյանը և մյունխենաբնակ այլ արվեստագետներ...

- Հետաքրքիր նախագիծ է, որի զարգացումներն առանձին անդրադարձ են պահանջում: Այժմ պարզե՞ք մեկ ուրիշ հարց. 2015-ից իտալացի երաժշտագետ Լեոպոլդո Միանոյի հետ հիմնել ես «Zentrum für Phonosophie» կենտրոնը, որը գործում է հնչյունային իստալացիա, փերֆորմանս, էլեկտրոնային երաժշտություն, ակուստիկ էկոլոգիա ժանրերի և թեմաների շուրջ: Ավելի հստակ կներկայացնե՞ս Ֆոնոսոֆիայի կենտրոնը:

- «Ֆոնոսոֆիա» բառացիորեն նշանակում է իմացություն հնչյունի միջոցով: Սա մի անհատական ստեղծագործական նախաձեռնություն է, որի կենտրոնում հնչյունային արվեստի ուսումնասիրումն է ոչ միայն տեսական, այլև գործնական, փորձարարական ճանապարհով, այն է՝ հնչյունային փերֆորմանսների, իստալացիաների, էլեկտրոն-ակուստիկ կոլաժների միջոցով: Առանցքային տեղում լսելու մշակույթն է. ի՞նչ է մշակում լսել, ունկնդրել, ընկալել հնչյունները և մեզ շրջապատող ակուստիկ միջավայրը:

- Ծուլան, մեր հագեցած գրույցն ուղում են ավարտել թերևս պաթետիկ հարցով: Աշխարհի բոլոր հիմն ու նոր երաժշտական ստեղծագործությունները վերացման վտանգի առջև են կանգնած, և դու հնարավորություն ունես փրկելու դրանցից միայն մեկը: Ո՞րն է դա:

- Վագների «Տրիստան և Իզոլդա»-ն...

Զրույցը երաժշտագետ, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲՈՒՅԱՆԸ

Հայաստանի Պեճական կամերային երգչախմբի կասարմամբ՝ Կոմիտասի երաժշտությունը թեւաճեց Թեհրանի «Վահրաթ» դահլիճում

Երգչախմբի կատարումներին զուգահեռ Արտյոյ Ջոհրաբեանը նախ ներկայացնում էր բանաստեղծին, ապա նրա ստեղծագործությունից ընթերցում հատածներ:

Դասական այս երեկոյի բացման խօսքում մայեստրո Ռազմիկ Օհանեանը մշտեց, որ այս տարի մշտում է Տիգրան Մանսուրեանի 80-ամեյա յոբելեանը եւ յաւելեց, որ մեծ պատիւ է այդ առիթով մեծանուն երաժշտագետի ներկայութիւնը այսօր այս դահլիճում: Խօսքի աւարտին նա շնորհակալու-

թիւն յայտնեց նաեւ օպերետային դահլիճի տնօրինութեանը:

Իսկ վերջում. վերջում բեմ բարձրացաւ Տիգրան Մանսուրեանը, ով թէ՛ յուզած էր, եւ թէ՛ ոգեւորած: Նա իր հոգու պէս զուլալ խօսքով յայտնեց իր երախտագիտութիւնը բոլոր նրանց, ում ջանքերով կազմակերպել էր այս հրաշալի համերգային երեկոն: Մայեստրոն իր խօսքում անդրադարձաւ նաեւ հայ-իրանական դարաւոր բարեկամութեանը, մշակութային սերտաճած կապերին ու հարուստ ժառանգութեանը,

որի կողմն են հեճ երկու ժողովուրդները:

Հանդիսատեսը, ով ողջ եւութեամբ ներծծեց այս երաժշտական գոհարների շնչելութեանն, տարբերով յոտնկայա երկար ժամանակ ծափահարում էր ու նոյն խօսքուրութեամբ էլ թողեց դահլիճը:

Լյուրը քաղված է՝ <http://www.yerkir.am/news/view/180470.html>, <http://www.yerkir.am/news/view/180580.html> կայքերից, Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՌՅԱՆԸ

ԿՈՍՄՏՎԱԾ ԸՎՅՐԵՆԻՔ Է, ՏՈՒՆ Է, ՀՈՂ...

Շնորհավորում ենք՝ Արաքս Մանսուրյանի ծննդյան 73-ամյակի առթիվ

Արաքս եղիայի Մանսուրյան (ծնվ. 1946, օգոստոսի 1, Բեյրութ, Լիբանան), հայ օպերային երգչուհի, սպարանո՝ Կոմպոզիտոր, ԴԽՄԴ արվեստի վաստակավոր գործիչ Տիգրան Մանսուրյանի և Գևորգ Միքեյի Մանսուրյանի ընտանիքում, ԳԳ վաստակավոր արտիստ Ծուշան Պետրոսյանի մայրը:

Արաքս Մանսուրյան. Գայաստանի Գանրապետության վաստակավոր արտիստուհի, երգել է ԳԳ օպերային թատրոնում, արտերկրյա տարբեր համերգային դահլիճներում, ելեղեցիներում, բուհական հաստատություններում:

- Դասական (Շուբերտի, Չայկովսկու, Վերդիի, Շուբանի, Բրամսի) հոգևոր երգերի, միջնադարյան տաղերի, արևմտաեվրոպական, հայկական երգերի անգուզական կատարող, կամերային երգեցողությունը մատուցում է նրա բաժնակալ ծայրային վարպետությամբ: Երգչուհին 15 տարի է ապրում է Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում, այնտեղ աշխատում այդ երկրի օպերային թատրոնում, դասավանդում Սիդնեյի կոնսերվատորիայում: Տպավորիչն այն է, որ երգչուհին ուսուցանում է ոչ միայն հայագի ուսանողներին, այլև օտարազգիներին: Տարիների ընթացքում երգչուհին օպերային կատարումներով, Կոմիտասի երգերով համդես է եկել աշխարհի բազմաթիվ բեմերում, և նրա կատարումներն արժանացել են համաշխարհային ճանաչում ունեցող մարդկանց գնահատանքին: Արաքս Մանսուրյանի կատարումների մեջ աչքի են ընկնում նրա ծայրային հուզական երանգները, երգեցողության ոճն ուրույն է. դերասանուհու երգացանկում տեղ են գտել ոչ միայն հայկական դերերգեր, այլև արևմտաեվրոպական ստեղծագործություններ: Արաքս Մանսուրյանը դասական օպերային երգիչների, մենակատարների արվեստի ավանդույթը շարունակում է իր երգարվեստով, հետաքրքիր ծրագրերով: Գանդիպուրմ Արաքս Մանսուրյանի հետ ծրագրավորված չէր, այն անակնկալ էր. զրույցն իր դստեր՝ սիրված երգչուհի Ծուշան Պետրոսյանի հետ ձուգահեռ և նրա բնականաբան էր:

- Տիկին Մանսուրյան, Դուք ի՞նչ առաքելությամբ եք վերադարձել Երևան: Արդյո՞ք համերգների պատրվակով:

- Հիմնական նպատակս այլ է եղել այս անգամ. այցելել, տեսնել թոռնիկներին և աղջկա՝ Ծուշանին: Երկար ժամանակ ես նրանց հետ հաղորդակցվում էի միայն եթերային կապերով՝ ինտերնետով կամ հեռախոսով, որովհետև վերջին ամիսներին ինքը շատ զբաղված էր համերգներով: Ամեն տարի ես լինում եմ Երևանում, անցած համերգների առիթով էի եկել և, ափսոս, որ չեմ կարող երկար մնալ՝ միշտ աշխատանքներս ինձ կանչում են, այնտեղ շատ անելիքներ ունեմ:

- Դուք մեծ ճանապարհ անցաք արտերկրում, նպատակը ո՞րն էր՝ ապրելը, թե՞ երազածին հասնելը աշխատելով օպերային բեմում, տարբեր երկրներում համերգներ կազմակերպելը:

- Սիդնեյի օպերային թատրոնում եմ աշխատում, այնտեղ գտնվելուս պատճառն էր, որ առաջին հերթին, ինչպես ասում են՝ կապերս ամրացրեցի և վերջնականապես մնացի այնտեղ: Գնացի հույսով, որ պիտի վերադառնամ, ծրագիրս այլ եղավ:

- Հայ համայնքի հետ ինչպիսի՞ կապեր ունեք, այն մեծաքանակ է, միաբա՞ն...

- 40 հազար հայություն կա այդ համայնքում՝ ես, իհարկե, երբեմն-երբեմն շփվում եմ, բայց աշխատանքիս բերումով ժամանակ այնքան չունեմ շփվելու, քանի որ դասավանդում եմ նաև Ավստրալիայի «Երաժշտական ինստիտուտ» կոչվող կոնսերվատորիայում: Դա մեր կոնսերվատորիայի աստիճանի ինստիտուտ է, որտեղ դասավանդում են դասական երաժշտություն, երգիչների ձայներն են մշակում: Ես ուսուցանում եմ երգիչների, որոնք ունեն միջազգային ճանաչում, տարբեր երկրներում երգելու իրավունք են ստանում, ընթացակարգն է այլն: Ծրագիր ունեմ Գայաստան ուղարկել համերգների այն ուսանողներին, որոնք տաղանդավոր կերպով կկազմակերպեն իրենց երաժշտական ներկայացումները: Այստեղ կբանակցեն դիրիժորների հետ, որ պատրաստեն նրանց համերգի:

- Թույլ տվեք իմանալ Ձեր ծրագրերի մասին առհասարակ:

- Մինչև անցյալ տարի շատ ծանրաբեռնված էի. Յանուզեկի հայտնի օպերայի վրա էի աշխատում, այն ավարտեցի և ներկայացուցչիս խնդրեցի, որ ծրագրերիս կազմակերպման հարցերում օժանդակեք: Եթե մի տեղ դասավանդում ես, այլ գործ չպիտի խանգարի քեզ: Այժմ, ամեն օր համարյա ուսանողներս հեռաձայնում են, ասում. արդեն ժամերը հաշվում ենք, ե՞րբ պիտի վերադառնաք: Նրանց մեջ ունեմ ազդեցությամբ հայ ուսանող, որը թեև իրավաբան է, շատ գեղեցիկ ձայն ունի, սիրում է երգել: Չգիտեմ՝ ինչքանով նա կդառնա երգչուհի, բայց կարծես իրավաբան ավելի է իր համար: Ես 15 տարվա մեջ 17-18 օպերա եմ պատրաստել Սիդնեյում, այդ բոլորը շատ դժվարությամբ եմ կազմակերպել: Ամեն դեպքում, իմ մասնագիտությունը սիրում եմ, ինչպես ասում են՝ իմ միս ու արյունն է դա, իմ ջուրն է, իմ հացն է, իմ ամեն ինչն է:

- Ձեր օպերային կատարումները տեսահոլովակներում դիտելով նկատվում է երգչուհու բարձրարվեստ կատարումներից զատ եսթետիկական ճաշակը (կեցվածք, բեմական հագուստի ընտրություն). այդ բոլորի հեղինակը դո՞ւք եք, թե՞ այլ դիզայներ-մոդելավորող:

- Ինձ համար շատ կարևոր է բեմական տեսքը, որն էսթետիկական ազդեցություն ունի հանդիսատեսի աչքում, որովհետև արտիստը պիտի լավ տեսք ու կեցվածք ունենա բեմում: Մանավանդ, եթե հանդիսատեսը վճարում է համերգի համար, իսկ արտիստը պետք է լիարժեքորեն բեմական կեցվածքով հանդես գա: Մենահամերգն այլ բան է, հետաքրքիր է, ամբողջական է. հագուստը, քայլվածքը, պահելակերպը, երգի մեկնաբանումը, առաջին մուտքը բեմ. այն արդեն պիտի երաժշտություն լինի: Նույնիսկ զարդերի ընտրությունը, շարժումն առանձնակի լինեն, ճաշակով և հմայող:

- Այդ բոլոր աշխատանքներն ավելորդ դժվարություններ չե՞ն բերում Ձեր հիմնական գործունեությանը: Օժանդակողներ ունե՞ք:

- Օպերայում, իհարկե, կան աշխատողներ, որոնք օգնում են, գրիմավոր կա, հագուստը, զարդերն են ընտրողներ... Նույնիսկ մեկ զարդ իրավունք չունեն փոխելու: Իրենք են որոշում ամեն ինչ, մինչդեռ մենահամերգների ընթացքում արդեն այլ է դրվածքը՝ ես եմ անում ամեն ինչ:

- Մենահամերգային շրջագայությունները շա՞տ են. դրանք ինչպե՞ս են կազմակերպվում:

- Ասացի, որ անցյալ տարի մենահամերգ ունեցա Գայաստանում: Հետո, սեպտեմբերին վերադարձա Ավստրալիա, դեկտեմբերին Եգիպտոս մեկնեցի և Կահիրեում ունեցա համերգներ: Շատ ջերմ համերգներ էին: Իհարկե, ես տարակուսանքով էի Արևելք մեկնել, որովհետև արաբական երաժշտությունը գնահատողները կարող է չգնահատեին օպերային երաժշտությունը կամ իմ երգը՝ հայկականը, և երբ կատարեցի Բերբերյան, Կոմիտաս, դահլիճը հոտակայս ծափահարում էր 5-10 րոպե շարունակ: Այդ համերգներից հետո անչափ հոգնած էի զգում ինձ:

- Հայկական «Կռունկ»-ը, «Լորիկ»-ը, «Հայրեններ»-ը երկր-երկիր եք տանում. ինչպիսի՞ ընդունելություն են դրանք գտնում Արևելքի հայկական համայնքներում:

- Այդ թվարկված ստեղծագործություններն իմ ծրագրերում կան, և ես սիրում եմ դրանք: Հիմա հիշում եմ, թե ինչպես էին հայ մամիկները, երիտասարդները ձայնակցում ինձ «Կռունկ»-ը երգելիս, ոմանք լացում էին, հուզմունքից խոսքեր չէին գտնում ասելու: Այդ համերգներից հետո ես չեմ զղջում, որ իմ ծրագրերը կազմում եմ հատկապես արտասահմանյան այն երկրների համար, որտեղ հայությունն ավելի շատ է: Այժմ ես պատրաստվում եմ մարտ ամսին համերգներ ունենալ իմ սաների հետ Սիդնեյում (ծրագիրը կոնսերվատորիան է կազմակերպում): Հիմա անհամբեր եմ մեկնելուս համար՝ այդ ծրագիրը իրագործելու և աշխատելու: Մի խոսքով ոչ միայն հայերն են հուզվում հայկական երգերով, այլև օտարները: Մի չինացի ուսանող ունեմ, ով Կանաչյանի «Օրորոցային»-ը սիրում է խենթացած, մի անգամ նա ասաց



Արաքս Մանսուրյան

ինձ. կարո՞ղ եմ այդ երգը երգել, և ես, նուտաները կրկնորհնակելով, անմիջապես հանձնեցի: Ես նրանց՝ ուսանողներիս սովորեցնելով հայ երգ, Կոմիտաս, նրանց հասկացնում եմ ով է հայ ժողովուրդը:

- Կոմիտասի «Լորիկ»-ը արդյո՞ք հայ տարագիրներից հուզելուց բացի նրանց չի վերադարձնելու Հայրենիք: Եվ ձեզ նույնպես այն չի՞ կանչելու «Արի՛ տուն» ընդմիջտ...

- Ես «վերադարձած» եմ: Ես այնտեղ մարմնով եմ ապրում... տարիներ առաջ, երբ «Անուշ»-ն էինք ներկայացնում, կոմիտասագետ, պրոֆեսոր Ռոբերտ Աթայանն ասաց՝ դուք ավելի շատ դրսում պետք է գործ անեք, որ մենք ավելի շահենք, արժեքավոր գործ է դրսում Ձեր աշխատելը, որպեսզի աշխարհին ցույց տանք մեր բարձր երգարվեստը: Մինչ այդ ես ունեի Ֆրանսիա գնալու հրավերներ: Հիմա եմ հասկացնում, թե ինչ է նշանակում կոմիտասյան չկատարված երգերի նոր մեկնաբանումը, նոր բեմելը: Շատերն են ինձ հարցնում՝ ո՞վ է Կոմիտասը, ես մի բառով ասում եմ Հայրենիք է, տուն է, հող...

- Ինչպե՞ս եղավ, որ դուք ճամպուրուկ պատրաստեցիք, մեկնեցիք արտերկիր: Ետ չմայեցի՞ք, չկայի՞մ ձեզ կապող այլ բաներ: Բարդ չէ՞ր գնալը, երբ երկիրը նույնպես վատթարագույն վիճակում էր:

- Ինչո՞ւ գնացի. ես 1990 թ. և 1992 թ. հրավիրված էի համերգների և այնտեղ ունկնդրում ունեցա օպերայում: Եվ երբ իմացան ծրագրեր ունեմ և դերերգեր օպերաներից, իրենք առաջարկեցին մնալ: Միաժամանակ, ամուսինս, որ եգիպտահայ է, սիրում էր ինձ, սպասում, պատրաստվում էր ինձ հետ ընտանիք կազմելու: Ես անձնապես երջանիկ եմ: Բայց տխուրն այն է, որ կիսված եմ 2 ճամփի մեջ, որովհետև հարազատներիս 70%-ն այնտեղ են: Տարին մեկ գնում եմ Ամերիկա, մյուս աղջկաս մոտ:

- Ինչպե՞ս եք վերաբերվում Ձեր աղջկա՝ Ծուշան Պետրոսյանի երգարվեստին:

- Նա լավագույն երգչուհի է, գնահատված է ժողովրդի կողմից. իսկ երգչուհին, ով ներկայացնում է ազգը, պիտի գնահատվի ըստ արժանվույնի:
- Ի վերջո, պիտի գա՞ք Երևան:

- Հաճախ ամուսինս ասում է՝ եթե այստեղ դժվար է, քո ցանկությամբ գնա, ես կգամ՝ գործս կհարմարեցնեմ: Ես հոգով երևանում եմ, հետագայում տեսնեմ ինչ կլինի:

- Ինչպե՞ս եք գնահատում Ձեր եղբոր՝ մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի ստեղծագործությունը. մեկերկու խոսքով բնութագրեք նրա աշխատանքը:

- Եղբորս գնահատում եմ աշխարհի շատ մեծեր, նա վերջին շրջանում ստացավ «Գրեմի» մրցանակ (ներկայացված 5 կոմպոզիտորներից մեկը եղբայրս էր): Նրա արվեստի առաջ ես լռում եմ և խոնարհվում, որովհետև... ուզում եմ լսել: Ես իրենից շատ բան եմ սովորել...

ԼՈՒԻՍԻՆ ԹՈՓՈՒԶԱՆ
«Մեծաց շարունակվող գրուցաշար. Զրույցներ, դիմապատկերներ, խոհեր...» գրքից

«ԳԻՔՈՐ» ՕՊԵՐԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ԾՆՈՒՆԴԸ 33 ՏԱՐԻ ԱՆՑ

Հունիսի 26-ին և 28-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի Դազարոս Սարյանի անվ. օպերային ստուդիայի դահլիճում ԳԳ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ, Ա. Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցի սաների մասնակցությամբ կայացավ Ստեփան Ջրբաբյանի «Գիքոր» օպերայի 2-րդ ծնունդը. բեմադրությունը նվիրված է Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին:

Այս նախագծի գլխավոր հովանավորներն են ամերիկաբնակ բարերարներ Կարո և Սիրվարդ Կավուկյանները: Նախագծի ղեկավարն էր Երևանի Ա. Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցի տնօրեն Անահիտ Գևորգյանը, կազմակերպիչներն են Ա. Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցը և Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը:

«Ձայնային տաղանդը ժառանգել եմ մայրական կողմից՝ տատիկս, մորեղբայրս և մայրս օպերային թատրոնի արտիստներ են, իսկ լռեցու պարզությունն ինձ փոխանցվել է հայրական կողմից: Տարիներ շարունակ ամառային արձակուրդս անցկացրել եմ Լոռիում, անձամբ զգացել Լոռվա բնության գրկում ապրելու հմայքը: Այս ամենին գումարվել է նվիրյալ ուսուցիչների ջանքերը, հավատն իմ ուժերի նկատմամբ, ինչն էլ վստահություն է ներշնչել, որ կկարողանամ պատվով կատարել այս դերը», - ասել է Գիքորի 12-ամյա դերակատար Անի Թամազյանը, ով նաև արդեն հասցրել է «Անուշ» մանկական օպերայում մարմնավորել Անուշի կերպարը:



Տեսարան օպերայից

«Փարոս» երգչախմբի համերգները Փարիզում



«Փարոս» կամերային երգչախմբի 1-ին համերգը «Les Invalides»-ում, դիրիժոր՝ Բաֆֆի Միքայելյան, կոնցերտմայստեր՝ Ռասմիլա Ալավերդյան



«Փարոս» կամերային երգչախմբի 2-րդ համերգը Իսի լե Սուլիմո համայնքում, դիրիժոր՝ Բաֆֆի Միքայելյան, մենակատարներ՝ Դանիել Ալավերդյան, Դավիթ Նշանյան

Հունիսի 17-23-ը «Փարոս» կամերային երգչախումբը համերգային շրջագայություններով հանդես եկավ Փարիզում: Ծավալուն, բարդ և բազմազան ծրագրով ելույթ ունեցավ քաղաքի լավագույն սրահներում, այցելեց խորհրդանշական վայրեր, ծանոթացավ ֆրանսիական մշակույթի հետ, գտնվեց ազգային օպերայում, պետական պատվո պահակախմբի նշանակության կենտրոնում, վիրտուալ թռիչք կատարեց Փարիզի վրայով:

Նշենք, որ անցյալ տարի, հոկտեմբերին Ֆրանկոֆոնիայի օրերին, ֆրանսիական «Vox Sirenis» երգչախումբը «Փարոս»-ի հետ համատեղ ելույթ ունեցավ Կոմիտասի տուն-թանգարանում (այս մասին հոդված տես «Երաժիշտ» ամսաթերթի N10 (154) 2018 համարում), որից հետո երգչախումբը հրավիրվեց Ֆրանսիա: Եվ այսպես, հունիսի 16-ին, տարբեր դժվարություններ հաղթահարելով իրագործվեց այդ նպատակը:

1-ին համերգը տեղի ունեցավ հունիսի 18-ին «Les Invalides»-ում (Հաշմանդանների տանը), որտեղ գտնվում է ֆրանսիական ռազմական թանգարանը, Նապոլեոն Բոնապարտի դամբարանը և այստեղ է տեղի ունեցել Մեծ Շառլ Ազնավուրի վերջին հրաժեշտի արարողությունը: Համերգի

առաջին բաժնում հնչեցին հայ՝ ս. Ս. Մաշտոցի, ք. Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Կ. Ջաքարյանի, Է. Հովհաննիսյանի, Թ. Ալթունյանի, Խ. Ավետիսյանի, Ռ. Պետրոսյանի, Խ. Մարտիրոսյանի, իսկ 2-րդ բաժնում՝ այլազգի կոմպոզիտորների՝ Ժ. դե Պրեի, Ա. Շնիտկեի, Լ. Յանսոնի, Գ. Փրսելի, Ա. Պյարտի, Մ. Դյուրուֆլեի, Գ. Օրբանի, Ջ. Բուստոյի, Լ. Շիպվոյի և Ջ. Լևիտսի ստեղծագործություններից, դիրիժոր Բաֆֆի Միքայելյանի ղեկավարությամբ, կոնցերտմայստերն էր Ռասմիլա Ալավերդյանը: Համերգը, որը մեծ հաջողություն ունեցավ և արժանացավ ունկնդրի բարձր գնահատականին, եզրափակվեց Շառլ Ազնավուրի «Ave Maria» ստեղծագործությունով, մենակատար՝ Հովսեփ Հաջակյան:

Հաջորդ 2-րդ համերգն (բացօթյա) իրականացավ հունիսի 21-ին, Փարիզի մերձակա Իսի լե Սուլիմո համայնքում: Երգչախումբը կատարեց ք. Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Գ. Սյունու, Կ. Ջաքարյանի, Է. Հովհաննիսյանի, Թ. Ալթունյանի, Խ. Ավետիսյանի, Ռ. Պետրոսյանի, Խ. Մարտիրոսյանի, Մ. Մավիսակալյանի, Գ. Օրբանյանի, Գ. Օրբանի, Լ. Յանսոնի, Ժ. դե Պրեի, Լ. Շիպվոյի և Ջ. Լևիտսի ստեղծագործություններից, դիրիժոր Ռ. Միքայելյանի ղեկավարությամբ:

Վերջին 3-րդ համերգը Փարիզի Սուրբ Երրորդության տաճարում էր: 1-ին բաժնում «Փարոս»-ը կատարեց Ս. Մաշտոցի, Կոմիտաս Կարդապետի, Գ. Օրբանյանի (ղեկավարեց խմբավար Ռուբեն Կարասեֆերյանը), Ա. Կարապետյանի Ժ. դե Պրեի, Օ. Գոթիլոյի, Ա. Շնիտկեի, Լ. Յանսոնի, Գ. Փրսելի, Ա. Պյարտի, Մ. Դյուրուֆլեի, Ջ. Բուստոյի, Լ. Շիպվոյի և Ջ. Լևիտսի ստեղծագործություններից՝ դիրիժոր Ռ. Միքայելյանի ղեկավարությամբ, մենակատարն էր Նվարդ Հովհաննիսյանը: Համերգն ավարտվեց Էդգար Հովհաննիսյանի «Երևան Երեբունի» խմբերգի կատարմամբ, դիրիժոր՝ Ռ. Միքայելյան: Բոլոր համերգները, որոնք նվիրված էին Կոմիտաս Կարդապետի ծննդյան 150-ամյակին, անցան մեծ ոգևորությամբ ու հաջողությամբ: Լեփ-լեցուն դահլիճը հոտնկայա ծափահարում էր: Բոլորը հուզված էին և անչափ տպավորված:

Երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Բաֆֆի Միքայելյանն ապրում և աշխատում է ԱՄՆ-ում և երգչախմբի հետ աշխատում է հեռակա: Նա իր տանը, նվիրյալ աշխատանքով և իսկական երաժիշտին հատուկ օժտվածությամբ մշտապես բարձր մակարդակի վրա է պահում երգչախումբը: Վերջինս, իհարկե, իրագործ-



«Փարոս» կամերային երգչախմբի 3-րդ համերգը համատեղ «Vox Sirenis» երգչախմբի հետ, Փարիզի Սուրբ Երրորդության տաճարում, մենակատար՝ Նվարդ Հովհաննիսյան



«Փարոս» կամերային երգչախումբը պետական պատվո պահակախմբի նշանակության կենտրոնում

վում է նաև խմբավար Ռուբեն Կարասեֆերյանի արդյունավետ ու մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ, ինչպես նաև «Ունիտոն» հասարակական կազմակերպության տնօրեն Արմեն Ալավերդյանի ջանքերի, կազմակերպչական մեծ ջիղի և անդադար աշխատանքի միջոցով:

Հիշենք նաև հովանավորներին՝ «Փարոս Հիմնադրամ»-ին, ՀՀ մշակույթի նախարարությանը և «Իմ Քայլը» հիմնադրամին, որոնց աջակցությամբ իրականացավ այս շրջագայությունը: Այն մեծ ձեռքբերում էր երգչախմբի համար, հանդես գալ Փարիզի խորհրդանշական բեմերում, լեցուն լսարանի առջև և նա մեկ անգամ տարածել հայ կոմպոզիտորների, հայ երաժշտական արվեստն արտասահմանում:

Մեր ապագան հարթելու համար պետք էր մասնակցությունը ծանօթացնել, ցույց տալ, որ մենք կենսունակ ենք, լուսոյ որդեգիր ու կարապետ ենք խավար վայրերում, շինարար ենք... ԿՈՄԻՏԱՍ

1912, 25 հոկտեմբերի, Կ. Պոլիս

ԱՐՄԻՆԵ ԱՌՈՅԱՆ ԵՐԱՇՄՏԱԳԵՏ

«Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

«ԳԻՔՈՐ» ՕՊԵՐԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ԾՆՈՒՆԴԸ 33 ՏԱՐԻ ԱՆՑ



«Գիքոր» օպերայի բեմադրության մասնակիցներ, դիրիժոր Հայկ Հովհաննիսյան, փորձի պահին

Երջանիկ պատահականությամբ է լինում, թե նախախնամությամբ, երբ փնտրվում էր Գիքորի դերակատար, ընտրությունը՝ ոչ թե տղա կատարող, այլ Անի Թամազյանին, հետագայում պարզվում է, որ նա Գիքորի երկարամյա դերակատարուհի Ասյա Հայրապետյանի թոռնուհին է: «Իմ վաղեմի երազանքն անսպասելիորեն իրականություն դարձավ, «Գիքորը» կրկին բեմադրվում է, այն էլ թոռնիկի մասնակցությամբ», - նշել է փորձառու դերակատարը, ով իր խորհուրդներով նպաստել է «Գիքոր»-ի նոր ծնունդի իրականացմանը: Հայ մեծանուն կոմպոզիտոր Ստեփան Ջրբաշյանը Հով-

հաննես Թումանյանի համանուն պատմվածքի հիման վրա, Հրաչյա Ղափլանյանի լիբրետտոյով 1973 թ. ստեղծել է «Գիքոր» օպերան: Այն առաջին անգամ բեմադրվել է 1974 թ. և մինչև 1986 թվականը եղել է թատրոնի խաղացանկում, որից հետո շուրջ 30 տարի այն չի բեմադրվել: Որոշ հանգամանքների բերումով օպերայի պարտիտուրը կորել է:


2018 թ. երևանի Արմեն Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցի տնօրեն Անահիտ Չևրոյանը, հայտնի օպերային երգչուհի Աննա Նշանյանի հորդորով, նրա թոռնուհի օպերային երգիչ և ռեժիսոր Արմեն Նշանյանի և ամերիկաբնակ բարերար, դպրոցի բարեկամ Սիրվարդ Կավուկչյանի հետ քննարկումների արդյունքում ձեռնամուխ է լինում «Գիքոր» օպերայի վերածննդի նվիրական գործին: Նրա խնդրանքով օպերային թատրոնի գրադանավարուհի Նազելի Մինասյանի ջանքերով գտնվում են օպերայի նվագախմբի գրեթե բոլոր գործիքների նվագաբաժինները և դաշնամուրային կլավիրը:

Պարտիտուրի վերականգնումը և համակարգչային շարվածքը կատարում է դպրոցի երգչախմբի խմբավար Ռուբեն Կարասեֆերյանը:

Երևանի պատվավոր մանկավարժ Շաքե Աշխատանի սանե-

րը և դպրոցի երգեցողության մյուս դասատուների աշակերտները՝ կոնցերտմայստեր Ռուզան Կարոսյանի աջակցությամբ, և դպրոցի «Տիգրանյան» նվագախումբը՝ ՀՀ վաստակավոր արտիստ, դիրիժոր Հայկ Հովհաննիսյանի գլխավորությամբ, սկսում են օպերայի փորձերը:

Պարային բեմադրությունը իրականացրել է դպրոցի «Real dance» պարային խմբի պարուսույց Գոռ Մկրտչյանը: Իրենց մասնակցությունն ունեն նաև դպրոցի «Արտիստ» թատերական ստուդիայի սաները: Բեմադրության հեղինակը և բեմանկարիչը ռեժիսոր Նարինե Թարգիմկոյանն է: Գլխավոր դերերում հանդես եկան Գիքոր՝ Անի Թամազյանը, Համբո՝ Հակոբ Արզումանյանը, Սալբի՝ Մարիամ Վարդուհանյանը, Բազազ Արտեմ՝ Կարո Այրումյանը, Նատո՝ Լիանա Այրումյանը, Դեդի՝ Աղավնի Հարությունյանը: Նախագծում ներգրավված է շուրջ 150 մասնակից:



ԳԱՅՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ <https://www.1in.am/2585046.html>

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿՆԵՐԻ ՎՈՆՈ ԲԱՐԱՋԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ



Արտյուն Անդրեասյան, ԵՊՀ շրջանավարտ (2017 թ. լուսանկար)

2019 թ. մայիսի 24-ին Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում տեղի ունեցավ Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի մագիստրանտների ավարտական թեզերի պաշտպանությունը: Պետական քննական հանձնաժողովը ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասարայանը: Հանձնաժողովի կազմում էին նաև վերոհիշյալ ամբիոնի հիմնադիր-վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լևոն Չուգասյանը, նույն ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու Սեյրանուշ Մանուկյանը և այլք: Ընթերցվեցին իրարից տարբեր և յուրովի աչքի ընկնող աշխատանքներ՝ արվեստի բնագծերի և մեթոդների մասին, հայ միջնադարյան արվեստի՝ դեռևս համակողմանի չուսումնասիրված կողմերի մասին, արդի հայ արվեստագետների մասին... Տեղի ունեցան կոնսուրկտիվ քննարկումներ պաշտպանվող թեմաների մասին, հնչեցին մասնագիտական կարծիքներ արվեստի ամբիոնի վարիչի, դասախոսների, նաև ասպիրանտների կողմից: Ընդհանուր առմամբ՝ այդ օրը ԵՊՀ պատմության ֆակուլտետում հաջողված էր ինչպես գիտական շրջանառության մեջ մտնող արվեստագիտական թեմաների, այնպես էլ երիտասարդ, խոստումնալից մասնագետների ի հայտ գալու տեսանկյունից:

Այդպիսիներից է նաև Արտյուն Անդրեասյանը, ով, ի դեպ, կատարում է իր առաջին քայլերը երաժշտական բնագրագիտության մեջ: Նրա գիտական գեկույցի թեման է՝ «Առնո Բաբաջանյանի կերպարը արվեստում», մի թեմա, որը զարմանալիորեն մեր արվեստագետների կողմից դեռևս չի արժանացել բավարար ուշադրության: Անդրեասյանը այս ուսումնասիրության շրջանակներում հաշվառել է խորհրդային և ետխորհրդային շրջաններում հիմնականում հայ արվեստագետների կողմից ստեղծված Բաբաջանյանի դիմապատկերները՝ գեղանկարները, գծանկարները՝ այդ թվում նաև երգիծանկարները, քանդակները և այլն. դրանց հեղինակների թվում այնպիսի երևելի արվեստագետներ են, ինչպես Մարտիրոս Սարյանը, Հենրիկ Սիրավյանը, Մարգրիտ Մուրադյանը, Ռուդոլֆ Խաչատրյանը, Բաբկեն Քոլոյանը, Գեորգի Յարայանը, Դավիթ Բեջանյանը, Արտուր Չաքմաքչյանը, Գետիկ Բաղդասարյանը... Արվեստաբանական նկարագիր են ստացել Բաբաջանյանի լուսանկարները, նրա իսկ ստեղծած գեղանկարները և գծանկարները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել մեծ կոմպոզիտորի մեծորդիալ թանգարանի ծրագրին, որ արդեն ավելի քան երկու տասնամյակ սպասում է իր լուծմանը: Այս թեզում մի առանձին գլուխ հատկացված է քանդակարտի դարի և դասական գեղարվեստի հետ Բաբաջանյանի ունեցած կապի վերահամարժեք ժամանակակիցների հուշերի և այլ աղբյուրների հիմամբ:

Արդյունքում նկարագրվել է համակողմանի վերլուծության է ենթարկվել մոտ հինգ տասնյակ արվեստի ստեղծագործություն (չհաշված լուսանկարները), որոնց զգալի մասը պրակտիկորեն անհայտ էր արվեստասեր հանրությանը. վեր է հանվել դրանցից մի քանիսի տարբերակների գոյությունը, մատնանշվել է Բաբաջանյանի կերպարվեստի տեսանկյունից ինքնուս լինելը և հատուկ վերաբերմունքը դեպի կուրիոզներ: Այս թեզի պաշտպանությունը քննական հանձնաժողովի կողմից դիտվեց գերազանց և արժանացավ բարձրագույն գնահատականի:

Նախկինում Բաբաջանյանի առնչությանը կերպարվեստին անդրադարձ կատարվել է գլխավորապես ժամանակակիցների հուշերի և վկայությունների տեսքով (հեղինակներ՝ Հենրիկ Իգիթյան, Վանիկ Սանթրյան, Միխայիլ Տեր-Օհանյան և այլք), որոնց զգալի մասը առանձին գլխի տեսքով ևս ներկայացված է ատենախոսության մեջ: Արվեստաբանական անդրադարձ այս թեմային ևս եղել է. խոսքը «Երաժշտական Հայաստան» ամսագրում հրատարակված «Три ипостати великого композитора» հոդվածի մասին է, որի հեղինակը Ե. Արոպյանի անվ. պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության



Ս. Մանուկյան, Լ. Չուգասյան, Մ. Հասարայան, Ա. Ավագյան, Բ. Ավետիսյան, Է. Մինասյան (2019 թ. մայիսի 24-ի լուսանկար), Պետական քննական հանձնաժողովը

թեկնածու, դոցենտ Սաբենիկ Մելիքյանն է: Վերջինիս հողվածում վերլուծված են միայն Բաբաջանյանի երեք հայտնի երգիծանկարները՝ ստեղծված Սերգեյ Արուստյանի, Գեորգի Յարայանի և Վարդան Աճեմյանի կողմից, և վերլուծություններն, իրենց հերթին, ներկայացրել են ի տարբերություն Անդրեասյանի ավարտական ատենախոսության, որտեղ նկարագրվող մոտ 50 ստեղծագործությունները վերլուծելիս մեծավ մասամբ բերված են և՛ արվեստաբանական, և՛ պատմագիտական, և՛ մատենագիտական, տեղ-տեղ նաև երաժշտական-տեսական տվյալներ (ինչպես, օրինակ, Դավիթ Բեջանյանի հանրահայտ հուշարձանի վերլուծության մեջ):

Անդրեասյանի «Առնո Բաբաջանյանի կերպարը արվեստում» մագիստրոսական ատենախոսությունը փաստացի շարունակությունն է 2017 թ. մայիսի 29-ին նույն ամբիոնում պաշտպանված համանուն ավարտական աշխատանքի, որն, ի դեպ, ևս բարձր գնահատականի արժանացավ քննական հանձնաժողովի կողմից, որը նախագահում էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղայանը: Այդ աշխատության մեջ նկարագրված էին պրոֆեսիոնալ արվեստագետների ստեղծած Բաբաջանյանի դիմապատկերները (ընդ որում՝ վերլուծություններն առավել պատմագիտական էին, քան արվեստաբանական), ինչպես նաև համակողմանի քննության էր առնվել Առնո Բաբաջանյանի երևանյան թանգարանի ծրագիրը, մամուլի և համացանցային տեղեկությունների հիման վրա ներկայացվել էր դրա պատմությունը, մատնանշվել էր առաջարկված երեք տեղանքներից (կոմպոզիտորի երևանյան բնակարանը Մատենադարանի մոտակայքում, Ս. Փարաջանովի տուն-թանգարանին հարակից տարածքը և Ա. Բաբաջանյանի անվ. փոքր ֆիլիարմոնիկ դահլիճը) յուրաքանչյուրում թանգարանի հիմնադրման կարելի լինելը կամ չլինելը, ամեն դեպքում հնարավոր բարդություններն ու ֆինանսական պատրաստություն խնդիրը, ինչպես նաև ներկայացվել էին որոշ նախահաշվարկներ, թե թանգարանի լիարժեք գործունեության համար ինչպիսի՞ և ի՞նչ քանակությամբ ապարատուրա անհրաժեշտ կլինի, հնարավոր կլինի՞ այդտեղ ապահովել և՛ էքսպոզիցիոն, և՛ ֆոնդային բաժնիների նյութերի ամբողջականությունը:

Ի տարբերություն 2017 թ. ավարտական աշխատանքի վերջերս պաշտպանած մագիստրոսական թեզում Անդրեասյանը փորձել է առավել հստակ հիմքերի վրա դնել Բաբաջանյանի դիմապատկերներին նվիրված գլխի տեսական-վերլուծական մասը, արդի հեղինակների ստեղծած վարպետության տարբեր աստիճաններ ենթադրող նկարների և քանդակների հաշվին ընդլայնել վերլուծվող նյութի ընդհանուր ծավալը՝ այստեղ ընդլայնելով հնարավոր լիակատարության վրա, ինչպես նաև, խոսելով թանգարանի ծրագրի մասին, ներկայացրել է դրան առնչվող այն տվյալները միայն, որոնք ի հայտ եկան 2017 թ. մայիսից հետո:

Այս ավարտական ատենախոսությունը, որն առաջինը ողջունեց հենց ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսու-

թյան ամբիոնը, մեկն է Արտյուն Անդրեասյանի արդեն իրականացրած քայլերից բաբաջանյանագիտության մեջ: Դրա պաշտպանության հետ գրեթե միաժամանակ հրատարակվեց «Անուրջներ» կոնցերտային պիեսի փոխադրումը երկու դաշնամուրի համար (Ե., Կոմիտաս, 2019), որն ուղեկցվում է երկլեզու (հայերեն և ռուսերեն) ծավալուն ներածական ուսումնասիրությամբ և բնագրագիտական բնույթի ծանոթագրություններով (գրքի մասին տես ամսաթերթի 12-րդ էջում): Սա, փաստորեն, Առ-



Մարտիրոս Սարյան. Առնո Բաբաջանյանի դիմանկարը: 1951 թ.: Կտ., յուղ. / Սարյան ընտանիքի արխիվ



Անհայտ հեղինակ. Առնո Բաբաջանյանի ուրվապատկերը: Ա.թ. (1960-ական թթ.): Պղնձալարեր / Երևանի Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, Ա. Բաբաջանյանի ֆոնդ



Վիլյամ Սարյան. Ինքնանկար Առնո Բաբաջանյանի հետ: 1960 թ. օգոստոսի 31: Թուղթ, ֆլումաստեր / Երևանի Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, Ա. Բաբաջանյանի ֆոնդ

նո Բաբաջանյանի երկերի առաջին քննական հրատարակությունն է և Անդրեասյանի առաջին քայլերից երաժշտական բնագրագիտության ոլորտում: Նա պատրաստել է նաև Բաբաջանյանի երկերի ժողովածուի նախապատրաստական ծրագիրը (ըստ որի՝ ժողովածուն բաղկացած է լինելու էրեսուն հատորից), ինչպես նաև դրա մի շարք հատորներ, որոնց խմբագրման պրոցեսը ներկա դրությամբ մոտ է իր ավարտին: Անդրեասյանը նշում է, որ մտադիր է այդ ժողովածուի հավելված հատորներից մեկը հատկացնել իր «Առնո Բաբաջանյանի կերպարը արվեստում» թեզին կամ առնվազն այդտեղ վերլուծված գեղարվեստի գործերին և լուսանկարներին, որոնց հավաքագրման գործընթացը դեռևս չի ավարտվել:

Խմբագրական

ՎՈՆՈ ԲԱՐԱՋԱՆՅԱՆԻ «ՎՆՈՐԳՆԵՐ»

Լույս է տեսել ԽՍՀՄ ժող. արտիստ, կոմպոզիտոր, դաշնակահար Առնո Բաբաջանյանի վերջին ավարտուն ստեղծագործություններից «Անուրջներ» կոնցերտային պիեսը, որի բնագիրը մինչ օրս չի հրատարակվել: Ընթերցողին է ներկայացվում պիեսի փոխադրումը երկու դաշնամուրի համար՝ իրականացված արվեստի պատմաբան Արտյուն Անդրեասյանի կողմից

(տես՝ սույն համարի 16-րդ էջում): ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր, դաշնակահար Առնո Բաբաջանյանի (1921-1983) երաժշտարվեստում արդեն 1970-ական թվականներին տեղի է ունեցել որոշակի բեկում, ի հայտ է եկել նոստալգիա դեպի անցյալը:

Այդ կարողի զգացումն առկա է հատկապես ակադեմիական ժանրերի երկերում՝ դաշնամուրային «Մեղեդի» և «Էլեգիա» մանրանվագներում, ծայրի և լարային նվագախմբի համար գրված «Արիա-վոկալիզում» և այլուր:

Տասնմեկ կոր անուն՝ բեմին



Գայանե Գեղամյանի դասարանի տարեկան հաշվետու համերգը



Ջուլիետտա Նազարյան, Գայանե Գեղամյան (պրոֆ., ակադեմիական երգեցողության ամբիոնի վարիչ), Գոհար Շահյան «ԵՊԿ» հրատարակչության հիմնադիր վարիչ, Նելլի Սուրենի Փորումովա (ԵՊԿ պրոֆեսոր)



Երևանի Կամերային երաժշտության տան բեմին Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում ուսանող տասնմեկ երգիչ-երգչուհիների դասարանական համերգն էր: Նրանց բոլորին երգարվեստի գաղտնիքներն է հաղորդում Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի վոկալ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գայանե Գեղամյանը:

Այս ակնարկի վերնագիրն ընտրեցի որոշակի վերապահմամբ. Գայանե Գեղամյանի՝ այս համերգին բեմ էլած սաներից մի քանիսն արդեն բավական լայն ճանաչում ունեն, տարբեր մակարդակի մրցույթների մրցանակակիրներ են, և իհարկե, սա իրենց անդրանիկ բեմերը չէր: Բայց նման ձևաչափով իրենք, հավանաբար, միասին առաջին անգամ էին հանդես գալիս Կամերային երաժշտության տան բեմին՝ արվեստասեր հանրության դատին հանձնելով ոչ միայն իրենց արվեստը, այլ նաև իրենց դասախոսի ջանադրության արդյունքը, նրա վարպետության արգասիքը: Մի քանի տարի առաջ նույն տեղում դարձյալ լսել էի Գայանե Գեղամյանի՝ նախորդ տարիների ուսանողների ելույթները, որոնց հանդիպել էր հենց իր՝ օպերային երգչուհու, վաստակաշատ ուսուցչի երգեցողությունը: Փոքրիկ ստեղծագործություններից մի հատվածի կատարումն անկարագրելի տպավորություն էր թողել, և ահա սպասում էի նման մի համերգի:

Գ. Գեղամյանի խստապահանջության, աշակերտողների թերանալու ղեկավարումն իր անհանդուժողականության, միաժամանակ գլխավորն իր սաներին նվիրվածության, նրբանկատության ու ջանքերի, հենարան լինելու պատրաստակամության շնորհիվ են նաև աճել ու մեծ բեմեր բարձրացել երգիչների մի քանի սերունդներ: Կարելի է թվել մի քանի

ուսանյալ հայտնի անուններ, որոնք անկեղծ երախտագիտությամբ են ասում իրենց դասախոսի անունը: Նրանց թվում են Հասմիկ Թորոսյանը, Պերճ Քարազյանը, Հրաչուհի Բասսենցը, Ռիմա Խաչատրյանը, Լուսինե Մակարյանը, Լուսինե Ղազարյանը և այլք:

Գայանե Գեղամյանը հստակորեն պահում է իր արվեստի բարձր միջը, և դրա վկայությունն արդեն 2019-ի հուլիսի 10-ին կայացած համերգն էր: Այդ միջը վերաբերում է թե՛ Գ. Գեղամյանից երգարվեստի դասեր առնող երիտասարդների կատարումների որակին, ինչն իրենց դասախոսի վարպետության և առարկայի իմացության, իր սեփական հմտություններն ու առարկայի իմացությունը հաղորդելու կարողությամբ է չափվում, թե՛ հենց իր երգեցողությամբ, որով դարձյալ երգարվեստից համերգը, և ինչին այնպես սպասում էի ես...

Ամբողջ համերգը կրում էր «Սեր հանդեպ երաժշտությունը» խորագիրը: Երկացանկն էլ այնպես էր ընտրվել, որ ամբողջը սիրո մասին էր, սիրո շուրջ, սիրով ողողում: Բեմեցին Դավիթ Թումանյանը, Արփիմե Աղջոյանը, Մարգարիտա Սարգսյանը, Էդուարդ Սարգսյանը, Արմինե Սարգսյանը, Սառա Հակոբյանը, Մելինե Պետրոսյանը, Գուրգեն Պողոսյանը, Անուշիկ Համբարձումյանը, Անժելա Բաղալյանը, Եվա Գևորգյանը: Սենակատարներին նվագակցում էին դաշնակահար-կոնցերտմայստրներ՝ Աննա ճուղուրյանը և Հռիփսիմե Աղաբաբյանը:

Ձանազանվող ծայրեր, հուզականության տարբեր աստիճաններ, երաժշտական նյութը հաղորդելու անհատական մոտեցումներ: Բայց մի բանը ընդհանուր էր. իրենց ու-

սուցչի ձեռագիրը, որ երևում էր երգելու կուլտուրայից, բնատուր օժտվածությունը մշակելու հմտությունից, երգիչ-երգչուհիների անհատականությունները ճանաչելու և այդ ճանաչողության վրա հենվելով ճիշտ ուղղորդելու աշխատելուց: Ես տեսնում էի, որ այս ծայրերը «գուրգուրված» էին Գայանե Գեղամյան ուսուցչի՝ Վարպետի կողմից:

Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի վոկալ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գայանե Գեղամյանի դասարանում ուսանող երիտասարդ երգիչ-երգչուհիների համերգը երգարվեստից իրենց ուսուցչուհու բեմերով: Դա իսկական վարպետության դաս էր նրանց համար, երաժշտական երկերի խորն ու ընդգրկուն ընթերցում, ծայրն ու զգացմունքը ներդաշնակելու անթերի օրինակ, իսկ հանդիսականի համար՝ համերգի բարձրագագաթային հատվածը՝ գեղեցիկ, բեմական անբռնազբոսությամբ, կատարողական անկեղծությամբ, հասուն հոգու ապրումի լայնահուն ծավալումով... Դա միայն ծայրն չէ, այլ նաև ապրված կյանքի կնիքը կրող դրամատիկական պատում՝ իմաստություններ և ներհայեցողությամբ: Իսկ կատարած երգերը սիրո մասին էին, նաև այն սիրո զորության, որից այնքան առատորեն ընծայում է իր գործին, երգարվեստին, աշակերտների բազում սերունդների, որոնք հիմա զարդարում են աշխարհի հանրահայտ օպերային բեմեր...

ՀԱՄԱԿԱՆ ԱՄՐԱԳՅԱՆ
գրող, բանաստեղծ

Միզագային փառասունների անկուղարչ

Aragsats International Music Festival poster with program details and dates.



Վահրամ Սարաջյանի վարպետության դասը



Ալեքսանդր Ռուդիկի վարպետության դասը



Էդուարդ Դելգադոյի վարպետության դասը



Յակով Կացնելսոնի վարպետության դասը



Ջուլիանա Բոյ, Իզաբելլա Մարոսյան, Ուսանողների համերգ՝ «Արագած» փառատոնի շրջանակներում՝ ԵՊԿ-ում



Զենգ Չիա Լի, Ուսանողների համերգ՝ «Արագած» փառատոնի շրջանակներում՝ ԵՊԿ-ում

տենսիվ երեքշաբթյա դասընթաց քոլեջի ուսանողների և երիտասարդ մասնագետների համար:

«Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնն այս տարի եզակի հնարավորություն ընձեռեց բոլոր լավագույն մասնակիցներին: Փառատոնում մրցանակալին տեղեր զբաղեցրած երաժիշտ-կատարողները կարողացան մասնակցել Իտալիայում անցկացված փառատոնին: Բացի այդ կարևոր համերգից, Իտալիա մեկնած երեխաները մասնակցեցին վարպետության դասերի, հանդիպեցին ու ծանոթացան Իտալիայում ապրող և ստեղծագործող հայտնի երաժիշտների հետ, ունկնդրեցին նրանց, լսեցին մասնագիտական խորհուրդներ և ստացան մեթոդական գիտելիքներ:

«Վերածնունդ» փառատոնի մրցանակակիրներին տրվել էր հնարավորություն Իտալիայում վարպետության դասեր առնել աշխարհահռչակ դաշնակահար Էֆրեն Բրիգլիին: Հաջողությամբ հանդես եկան Երևանի Դ. Սարգսյանի անվ. արվեստի, Սայաթ Նովայի անվ. երաժշտական, Ավետ Գաբրիելյանի անվ. երաժշտական, Ստեփանակերտի Կոմիտասի անվ. երաժշտական, Սարգիս Բարխուդարյանի անվ. երաժշտական դպրոցների սաներից՝ Մարիա Արիստակեսյանը, Ալեքս Գևորգյանը, Անի Նիկոլյին Մանուկյանը, Տիգրան Գրիգորյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Մերի Մարգարյանը, Երիկա Սարգսյանը, Լինա Բաբայանը և Իտալիայում կայացած փառատոնի 3-րդ կարգի մրցանակակիրներ՝ Դավիթ Բոյաջյանը, Ռուբեն Երկանյանը և Էլեն Պողոսյանը:

Պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅԹՅԱՆԸ

ЮНЫЕ МУЗЫКАНТЫ НА ФЕСТИВАЛЕ В БУРГОСЕ



Участники фестиваля



Барди Минасян, Арман Гаспарян, Акоп Джагацпаян, Амбарцум Тарлания, Володя Геворкян, Артур Геворкян, Айка Израелян.



Барди Минасян

В середине июля в небольшом городке Бургосе (бывшая столица Кастилии), который находится на севере Испании и славится своим необыкновенной красоты готическим Кафедральным собором XIII века, состоялся международный музыкальный фестиваль, в котором приняли участие юные музыканты из США, Канады, Казахстана, Армении, Испании и России. Фестиваль, организованный в 1990 году известными музыкантами пианистом Ефимом Брискиным (художественный руководитель) и дирижером Давидом Кригером (генеральный директор), ежегодно проводится в США, в Италии, в Испании и других странах.

Фестиваль – это не только концертные выступления исполнителей. Это, прежде всего, возможность обмена творческими идеями, своеобразное состязание музыкантов, особая форма общения исполнителей со слушателями, одинаково привлекательная и для тех, кто на сцене, и для тех, кто в зале.

Целью фестиваля стало повышение исполнительского мастерства юных музыкантов, знакомство с новыми коллективами, создание дружеских отношений между детьми с разной культурой, обмен исполнительскими навыками. Фестиваль отличался от других подобных мероприятий наличием образовательного фактора в виде мастер-классов.

Жюри фестиваля представляли музыканты с мировым именем. Так, художественный руководитель фестиваля, Ефим Брискин, выпускник Ленинградской консерватории, является преподавателем Манхэттенского музыкального училища и музыкальной консерватории Вестчестера. Господин Брискин в свое время основал и стал художественным руководителем музыкального фестиваля Summit Music в Нью-Йорке, сегодня работает на факультете Международного музыкального фестиваля Бургос (Испания).

Юлиан Милкис – кларнетист–виртуоз с мировым именем, ведет обширную исполнительскую деятельность. Уроженец Одессы, он с 1978 года проживает в Нью-Йорке. Выпускник аспирантуры Джулиардской школы, также в течение трех лет занимался у легендарного Бенни Гудмена. Сам Юлиан называет себя «единственным учеником Гудмена», и это действительно так, ибо «король свинга» действительно никогда не брал учеников до знакомства с Юлианом.

Савелий Шальман – скрипач, кандидат искусствоведения, преподаватель специальной музыкальной школы (колледжа) Санкт-Петербургской консерватории. Савелий Маркович разработал эффективную методику развития юных скрипачей, постоянно ведет мастер-классы, выступает с лекциями в США и европейских странах, является членом жюри многих международных конкурсов и фестивалей.

Елена Россман – президент и музыкальный директор AADGT, она помогает становлению молодых талантливых музыкантов.

Госпожа Россман разработала и много лет применяет свой уникальный метод обучения игре на фортепиано в Консерватории Вестчестер. Она дает мастер-классы по всему миру.

С армянской стороны членом жюри выступил Заслуженный артист РА, профессор Ереванской государственной консерватории имени Комитаса гитарист Акоп Джагацпаян, который ведет широкую исполнительскую и педагогическую деятельность, проводит мастер-классы в России и европейских странах.

Юные музыканты Армении смогли принять участие в этом фестивале благодаря руководству и организаторам Международного конкурса–фестиваля «Возрождение», которыми подписаны договора со многими признанными международными конкурсами и фестивалями.

Так, Армению представляли следующие лауреаты и призеры конкурса–фестиваля «Возрождение»: ученик 9–го класса специальной музыкальной школы им. Чайковского, скрипач Арман Гаспарян (педагог Сусанна Арменакян), студент 3–го курса Ереванской государственной консерватории, виолончелист Айка Аракелян (класс профессора Армена Месропяна), выпускница Ереванской государственной консерватории по классу гитары (класс профессора Акопа Джагацпаяна) и по классу композиции (класс профессора Вартаана Аджемяна) Барди Минасян.

Народное творчество представляли: Айка Израелян (3–й класс, дудук, Армавир), Амбарцум Тарлания (3–й класс, дудук, Гюмри), Володя Геворкян (3–й класс, дудук, Гюмри), Артур Геворкян (3–й класс, народное пение, Гюмри), Арсен Амбарцумян (4–й класс, скрипка, Арцах), Сергей Амбарцумян (4–й класс, гитара, Арцах), Ани Айрапетян (4–й класс, вокал, Арцах). Следует отметить, что юные музыканты Армении сразу же обратили на себя внимание.

Айка Аракелян, трижды лауреат конкурса–фестиваля «Возрождение» и дипломант конкурса Иашвили (Грузия), показал себя вдумчивым музыкантом, исполнив 3–ю часть Концерта А. Хачатуряна. Его игра отличалась профессионализмом, богатой палитрой тембровых красок и красивым звуком. Член жюри, преподаватель Мадридской консерватории Александр Осокин, дав высокую оценку молодому музыканту, предложил ему продолжить обучение в его классе.

Исполнением Полонеза D-dur Генрика Венявского показал свое мастерство Арман Гаспарян. Хотя исполнение на

первом концерте и оказалось не безупречным (интонационная лабильность, форсирование звука, видимо сказались усталость после перелета), второе выступление произвело впечатление внешней эффектностью, и что самое главное, было отмечено, что юный скрипач обладает большим потенциалом.

Талант выпускницы Ереванской консерватории гитаристики и композитора Барди Минасян единодушно был отмечен всеми членами жюри.

Барди Минасян семь лет назад с семьей переехала в Армению из Сирии. В Дамаске она окончила музыкальную школу имени Барсега Каначяна и в Ереване поступила в консерваторию, в класс Вардана Аджемяна. Окончив курс обучения, продолжила учебу в магистратуре по классу гитары Акопа Джагацпаяна. Гитара – ее любимый инструмент, на котором она играет с детства. Еще будучи студенткой консерватории, Барди Минасян принимала участие в концертах молодых композиторов и на разных фестивалях. В прошлом году на международном фестивале «Саят–Нова» в Нью-Йорке молодой композитор получила вторую премию и премию Карнеги–холла.

На фестивале в Бургосе Барди Минасян возвышенно-эмоционально, предельно музыкально, и, не побоюсь этого слова, артистично исполнила «Небесное танго» французского композитора Роланда Диенса, а на гала–концерте покорила слушателей оригинальным произведением современного композитора Никиты Кошкина – сюитой «Игрушки принца», изобилвавшим сонористическими и стереофоническими приемами.

Особо хочется отметить выступление десятилетнего дудукиста из Армавира Айка Израеляна, получившего на конкурсе–фестивале «Возрождение» Гран–при. Заиграв «Հովիտի կանգը», юный музыкант мгновенно сумел завоевать внимание зала, который погрузился в волшебные звуки многим не знакомого дудука. Игра Айка покорила красочностью и эмоциональностью исполнения.

Свое мастерство игры на дудуке показали гюмрийцы Амбарцум Тарлания и Володя Геворкян.

В просторном зале бывшей королевской резиденции XVIII века вдохновенно звучали песни гусана Шагена «Զեփյուռի Գճաճ» и Комитаса «Զիճար էս» в исполнении Артура Геворкяна и Амбарцума Тарлания.

В рамках бургосского фестиваля проходили не только выступления юных музыкантов, но также состоялся концерт профессоров, членов жюри, а во внутреннем двореке Кафедрального собора состоялся концерт Камерного оркестра фестиваля, на котором звучала музыка Моцарта и Вивальди. Были проведены мастер-классы, на которых именитые музыканты делились своим опытом с молодыми исполнителями из разных стран.

Юлиан Милкис, один из немногих кларнетистов (а может и единственный), который владеет в совершенстве техникой перманентного дыхания, провел мастер-классы с армянскими дудукистами и дал высокую оценку их исполнительскому мастерству.

Акоп Джагацпаян после выступления скрипача Армана Гаспаряна обратился с вопросом к Савелию Марковичу Шальману:

– Способный парень, не правда ли?
 На что последовал незамедлительный ответ:
 – Нет, армяне не способные. Армяне талантливые!
 Все участники фестиваля получили массу положительных эмоций, воодушевились наставлениями именитых музыкантов и укрепились в желании совершенствовать свое мастерство.

МАРГАРИТА ЭДУАРДОВНА БАГДАСАРЯН,
 музыковед, доцент АГПУ им. Х. Абовяна



Концерт камерного оркестра во внутреннем двореке Кафедрального собора



Маргарита Багдасарян, Барди Минасян, Юлиан Милкис



Награждение участников фестиваля. Давид Кригер, Ефим Брискин, Барди Минасян

Դասարանական համերգ «Կոմիտաս - 150»

4. Սարաջյանի անվ. երաժշտական դպրոցը համարյա 65 տարեկան է, սակայն ընդամենը 10 տարի առաջ է այստեղ բացվել ժողովրդական գործիքների բաժինը: Գիշտ այդքան ժամանակ առաջ էր, որ ճանաչված քանոնահարուհի Անուշ Կիրակոսյանը սկսեց դասավանդել այս կրթօջախում: Դպրոցի տնօրեն Արմինե Պողոսյանի և Անուշ Կիրակոսյանի համատեղ աշխատանքի և նպատակասլաց ջանքերի շնորհիվ ստեղծվեց և ընդլայնվեց ժողովրդական նվագարանների բաժինը: Կարճ ժամանակամիջոցում առանձին դասարաններ առավել հաջողությունների հասան վաստակաշատ ուսուցիչների շնորհիվ, ովքեր ամեն տարի հանդես էին գալիս դասարանական պատասխանատու համերգներով, այդպես ներկայացնելով երեխաների հաջողությունները, նաև ժողովրդական գործիքների բաժնի կարևորությունը: Այս տարի իր յուրատեսակ ելույթով աչքի ընկավ դուդուկի դասարանը՝ Արմեն Գրիգորյանի ղեկավարությամբ: Ա. Գրիգորյանը ճանաչված դուդուկահար է, ՀՀ վաստակավոր արտիստ, վաստակաշատ ուսուցիչ: Տարին կոմիտասյան էր և դասարանական համերգը կրում էր «Կոմիտաս 150» խորհրդանշական խորագիրը, իսկ ծրագիրը բաղկացած էր բացառապես մեծանուն Կոմիտասի ստեղծագործություններից: Համերգի սկզբից ժողովրդական գործիքների բաժնի ղեկավար Անուշ Կիրակոսյանը ներկայացրեց ծանոթացրեց մեծ Կոմիտասի կենսագրության և ստեղծագործական գործունեության հետ: Հետաքրքիր գրույց-նախաբանի միջոցով նա ներկայացրեց, որ Կոմիտասը հայ հանճար է, ով մինչև կյանքի վերջը գիտակցաբար չդավաճանեց իր մարդկային, ազգապաշտ ու ազնվագույն գաղա-



Լևոն Խոջայան, Սերգեյ Դալայան, Արմեն Հովհիվյան, Արման Հովհիվյան, Կարեն Խաչատրյան, Արմեն Արսենյան, Գարիկ Խաչատրյան, Վահե Հունանյան, դասատու՝ Արմեն Գրիգորյան

փարներին, իր պահվածքով արհամարհելով կեղծ աշխարհի սուտ մեծերին: Այնուհետև պատասխանեց առեղծվածային Կոմիտասի կենսագրականի հետ կապված հանդիսատեսին հուզող մի քանի հարցերի: Համերգային մասը սկսվեց դուդուկահարների անսամբլի ելույթով «Դէ յաման» ստեղծագործության բազմաձայն կատարմամբ: Մեծ պատասխանատվությամբ էին պատրաստվել ապագա դուդուկահարները: Դա էր վկայում նրանց հասուն, հուզիչ նաև գրագետ կատարումները: Որոշ աշակերտներ այնքան հասուն էին նախաձեռնում, որ կարծես հասկանում էին այդքան խորիմաստ ստեղծագործությունների իմաստը: Ծրագիրը բաղկացած էր Կոմիտասի հայտնի

ստեղծագործություններից՝ «Գարուն ա», «Կունկ», «Քելեր ցուլեր», «Ախ Սարալ ջան», «Երկինքն ամպել ա», «Շախկը-շուխկը», «Կուն առա», «Հինար ես», «Գնա-գնա» և այլն: Պարզ էր, որ այսպիսի բարդ ծրագրի և զեղեցիկ կատարումների հետևում առեղծվածային էր թաքնված, ինչի մասին խոսելիս դասատու Արմեն Գրիգորյանը համեստորեն նորմալ էր համարում և նույնիսկ գտնում, որ սովորել ցանկացող ու տաղանդավոր երեխաներին պետք է այլ հարթության վրա դնել և շատ ավելի աշխատել նրանց հետ: Լավագույն սաներ է դաստիարակում Արմեն Գրիգորյանը, որոնցից շատերը հանրապետական և միջազգային մրցույթի հաղթողներ են՝ Արմեն Արսենյան, Սերգեյ Դալայան, Լևոն Խոջայան, մյուսներն աչքի են ընկնում գերազանց առաջադիմությամբ՝ Արմեն և Արման Հովհիվյաններ, Կարեն Խաչատրյան, Վահե Հունանյան, Գարիկ Խաչատրյան: Գեղեցիկ ու հիշարժան համերգին ներկա էին դպրոցի տնօրեն Արմինե Պողոսյանը և փոխտնօրեն Գայանե Կարապետյանը: Համերգի ավարտին նրանք գոհունակության խոսք ասացին և բարձր գնահատեցին Արմեն Գրիգորյանի տքնաջան աշխատանքը: Իսկ հանդիսատեսի երկար ժախերը և ծնողների հուզված դեմքերը շնորհալի սաների, հրաշալի ուսուցչի կատարած աշխատանքի ու նվիրումի բարձր գնահատականն էին նախաձեռնում:

ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Տեղակատար քանոնահարուհի,
ժուռնալիստ, ուսուցչուհի

Լևոն Բաբաջանյանի «Անուրգներ»ը

Այդ զգացումների առկայությունը երևում է նաև նույն ժամանակաշրջանում գրված էստրադային երկերում «Տոնական երևան» նվագախմբային պիեսում (որի հիմքում ընկած է «Ղափամա» ժողովրդական երգը), «Ազգ փառապան»-ը, «Զքնաղ երագ», «Հեյ, աստղեր», «Մեր սիրելի երևան» երգերում, դաշնամուրի և նվագախմբի համար գրված «Նոկոտյուրն» կոմպոզիցիային պիեսում և այլուր:

Վերոհիշյալ նուստալգիկ զգացումներն են հիմք կազմել դաշնամուրի և էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Անուրգներ» պիեսի համար, որը բախտի բերումով դարձավ կոմպոզիտորի վերջին ավարտուն ստեղծագործություններից մեկը, որի վրա Բաբաջանյանն աշխատել է 1982 թ. վերջին Մոսկվայում, իսկ պարտիտուրն ավարտի է հասցվել 1983 թ. փետրվարի 17-ին: Միխայիլ Տեր-Օհանյանն իր «**Арно Бабаджанян**» ռուսերեն մենագրությունում ենթադրություն է հայտնել, թե այս պիեսը պիտի գրված լինի 1983 թ. գարնանը: Ըստ երևույթին՝ երջանկահիշատակ երաժշտագետը հնարավորություն չի ունեցել ուսումնասիրելու այս պիեսի բնագիրը աղբյուրները: Նա գրում է. «**Грезы**» не изданы. **Более того, ни в одном из архивов мне не встретились хотя бы черновики клавира или партитуры этой пьесы. Что ж, еще один повод для сожаления, что проблемы творческого наследия Бабаджаняна решались столь «бесхозяйственно»...**

Կոմպոզիտոր, դիրիժոր, ՀՀ ժողովրդական արտիստ Մելիք Մավիսակալյանը տողերիս գրողի հետ անցկացրած մասնավոր զրույցի ընթացքում (2018 թ. հոկտեմբերի 16) պատմել է հետևյալը: 1983 թ. ամռանը Մոսկվայից վերադառնալուց քիչ անց, Բաբաջանյանն իր այս ստեղծագործությունը նվագով ցույց է տվել նրան՝ այդ ընթացքում ասելով մոտավորապես հետևյալը. «Ես այս բարդ ու խառն օրերից հետո հիշեցի մանկությանս անհոգ օրերը, մեր հին բակը, ընկերներիս. ամեն ինչ աչքիս առաջ եկավ: Հուզումնալից պահեր առաջացան, որովհետև այն ժամանակ գոյություն չուներ այն բարդ երևույթներն ու իրադարձությունները, որ կան այսօր: Եվ ահա այդ հուզումնալից վերին շրջանում էր այս նոր գործը, որի հիմքում մի՛ ուղղակի անարատ մեղեդի է:

Այդ զրույցից պարզվում է, որ «Անուրգներին» առաջին ունկնդիրը եղել է կոմպոզիտորի կինը՝ դաշնակահարուհի Թերեզա Հովհաննիսյանը, ով այդ ընթացքում չկարողացավ զսպել իր հուզմունքը և արտասվեց: Պրն. Մավիսակալյանը մեզ պատմեց նաև, որ իր դիրիժորությամբ այս պիեսը ծայնագրվել է նույն թվականի սեպտեմբերին և մտել է առաջիկա ամսանորյա հեռուստահաղորդման ծրագրի մեջ (ինչի մասին, ի դեպ, պատմել է նաև Բաբաջանյանն ինքը՝ իր վերջին հեռուստահարցազրույցում), սակայն հեղինակը վախճանվել է մինչ այդ՝ նոյեմբերի 11-ին: Ուստի նկարահանումը տեղի է ունեցել առանց հեղինակի մասնակցության, դրա փոխարեն նկարահանվեց ռոյալը՝ առանց դաշնակահարի. գուցե այդպես ցույց է տրվել, որ Բաբաջանյանն այն եզակիներից էր, ում տեղը ու դերը հայ երաժշտարվեստում հնարավոր չէ ոչնչով փոխարինել...

Հայտնի է, որ Անն Բաբաջանյանը եղել է մելոդիստ կոմպոզիտոր. նրա նվագարանային երկերում ևս հիմք են ընդունված այնպիսի բնահունչ մեղեդիներ (լինեն դրանք հեղինակային թե ավանդական), որոնք ակամա ստիպում են ունկնդրին մտածել իրենց վոկալ ակունքների գոյության մասին: Կան դեպքեր, երբ այդպիսի նվագարանային պիեսները վերածվել են երգի՝ թեկուզ և հեղինակի կամքից անկախ, ինչ

չի ամենավառ օրինակը հանրահայտ Նոկոտյուրնն է: «Անուրգներ» պիեսը ևս վերջերս վերածվեց երգի (վերնագիրը՝ «Երկու բառ»), որն օրիգինալ նվագարանային ֆոնի ներքո կատարել են խոսքերի հեղինակ Արման Ներսիսյանը և Գայանե Հովհաննիսյանը: «Անուրգների» 18-21-րդ տակտերն օգտագործվել են երգչուհի Նարինե Դովլաթյանի կատարած «**What a beautiful Sunday**» («Ի՞նչ հրաշալի կիրակի է») երգի հիմքում: Բացի այդ այս պիեսի մեղեդու առաջին տակտերը հաճախ համեմատում են Բաբաջանյանի հեղինակած «Սերենադ» (Երևանի սիրուն աղջիկ) երգի համապատասխան մեղեդային հատվածի հետ. նույն հաջողությամբ կարելի է զուգահեռներ անցկացնել «Անուրգների» և գուսան Հավասու «Յարը մարդու յարա կուտա» երգի հետ, եթե հաշվի առնենք լիբանանահայ հանրահայտ երգիչ Լևոն Գաթրոյանի հեղինակած տարբերակը, որը, մասնավորապես, հայտնի է դարձել Հովհաննես Բաղդասարյանի կատարման շնորհիվ: Մեղեդու հաջորդ հատվածի անալոզն առկա է Ալեքսանդր Հարությունյանի «Հայրենիքիս հետ» խմբերգում. ընդ որում այս հատվածների հարմոնիկ պատկերները ևս համընկնում են: Այնուամենայնիվ, պետք է ընդունել նաև, որ այս երաժշտական պրոգրեսիան բավականին հաճախ է հանդիպում ոչ միայն էստրադային, այլև՝ դասական երաժշտության մեջ:

Մեր հատուկ ուշադրությանն են արժանացել պիեսի 105-112 տակտերը, որտեղ դաշնամուրի պարտիտուրն բացառիկ վարպետությամբ կիրառված են բլյուզային լադին բնորոշ արպեժիոներ, ինչն անմիջապես ստեղծում է ջազային իմպրովիզացիայի տպավորություն: Տեր-Օհանյանի մենագրությունում այս հատվածը նկարագրված է որպես իմպրովիզացիա: Բնագրին ծանոթ չլինելու դեպքում նույնիսկ դժվար չէ նկատել այս հատվածի մշակվածությունը, ինչը երևում է նվագախմբային և դաշնամուրային նվագամասերի կատարելապես համահունչ լինելուց: Բացի այդ՝ տարբեր առիթներով (ինչպես, օրինակ Բաբաջանյանի վախճանից հետո նկարահանված «**Верни мне музыку**» ֆիլմի, կամ հայտնի երգիչ Մուսլիմ Մագոմաևի նախածնունդով 1988 թ. Մոսկվայում կայացած «**Посвящение Арно Бабаджаняну**» համերգի շրջանակներում) հրապարակվել են հատվածներ կոմպոզիտորի մոսկովյան բնակարանում արված մի տեսագրությունից, որի ընթացքում նա գրի է առնում դաշնամուրի պարտիտուր և միաժամանակ ստուգում է իր նվագով. այդ հատվածներից որոշները բացորոշ կերպով ցույց են տալիս, թե ինչպես է հեղինակն աշխատել հենց այս ջազային-իմպրովիզացիոն կոչված հատվածի վրա:

Երաժշտասերներին լավ ծանոթ է հեղինակային ծայնագրությունը: Ըստ 1995 թ. թողարկված «**Arno Babadjanyan: Composer and Pianist**» ծայնակազմակերպի վրայի տեղեկության՝ հեղինակին նվագակցել է Հայաստանի հեռուստառադիոյի էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը՝ կոմպոզիտոր Մելիք Մավիսակալյանի ղեկավարությամբ: Միխայիլ Տեր-Օհանյանը տեղեկացնում է, որ դա արվել է 1983 թ. ամռանը Մոսկվայում. հեղինակին նվագակցող համույթի ղեկավարը կոմպոզիտոր Բորիս Կարամիշևն էր: Վերջերս ռուսական պետհեռուստառադիոֆոնից ստացել ենք պատասխան, ըստ որի՝ այդ հայտնի ծայնագրությունն իսկապես արվել է 1983 թ. հունիսի 24-ին Մոսկվայում՝ Կարամիշևի դիրիժորությամբ: Կա նաև տեղեկություն, ըստ որի՝ հեղինակն այս պիեսը հրապարակայնորեն կատարել է Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում՝ Մելիք Մավիսակալյանի դիրիժորությամբ: Վերջինիս ղեկավարությամբ արված ծայնագրությունը պահվում է Հայաստանի հանրային ռադիոընկերության ծայնագրությունների ոսկե ֆոնդում:

«Անուրգների» մեկ ինքնագիր պարտիտուր (27 էջ) գտնվում է Հայաստանի Պետհեռուստառադիոյի էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի արխիվում և մինչ օրս չի հրատարակվել: Այս պարտիտուրը մոսկովյան ծայնագրությունից հետո ենթարկվել է որոշակի խմբագրման, ինչը երևում է պարտիտուրում եղած և հետո փոփոխված կամ հանված հատվածների՝ մոսկովյան հայտնի ծայնագրությունում առկա լինելուց: Ամենայն հավանականությամբ՝ այս պարտիտուրն առաջին անգամ կիրապարակվի Բաբաջանյանի երկերի լիակատար ժողովրդականում, որտեղ բնագրի կիսատ երևալուց, ինչպես նաև՝ տվյալ էջի կողքի ծայրին հարևան էջի եզրը ևս տպվելուց, բնագրի քսերոպատճենն է միայն:

«Անուրգներ» պիեսը դաշնամուրային քառածեղք մշակմամբ լույս է տեսել 2013 թ. Երևանում Լեհաստանի դեսպանատան աջակցությամբ տպագրված «Pirumova aranazje» ժողովածուում: Կազմող հեղինակը՝ դաշնակահարուհի, կոմպոզիտոր Լիանա Փիրունովան, թերևս, չի օգտվել որևէ առկա նոտագիր աղբյուրից, այլ իր մշակումը կատարել է սուկ ծայնագրության հիման վրա՝ իր հերթին թույլ տալով բավականաչափ շեղումներ բնագրից (այսպես, օրինակ ինտրոդուկցիայի երրորդ տակտի (տո. 16, 20) հարմոնիան D-Dur – B-dur(+7), Փիրունովան դարձրել է D-Dur – d-Moll), ինչպես նաև՝ կրճատումներ. նրա պատրաստած տեքստում, օրինակ՝ բացակայում են 105-112 տակտերը՝ վերոհիշյալ «ջազային-իմպրովիզացիոն» հատվածը: Մյուս կողմից՝ այդ ժողովածուի ինչպես կազմման, այնպես էլ համակարգչային շարվածքի որակը հեռու է պրոֆեսիոնալիզմից:

Սույնով ներկայացնում ենք «Անուրգների» նոր փոխադրում երկու դաշնամուրի համար: Դա, ըստ բնույթի, կարելի է համարել բնագրային, քանի որ հիմքում ընկած են ինքնագիր պարտիտուրը, դաշնամուրի ինքնագիր պարտիտուր, մոսկովյան հեղինակային ծայնագրությունը և այլ՝ երկրորդական աղբյուրներ, ընդ որում՝ նախապատվությունը տրված է պարտիտուրին: Հեղինակային ծայնագրության հիման վրա, ինչպես նաև՝ սույնը կատարող դաշնակահարներին հասցեագրած լինելով հանդերձ, տեքստում անհրաժեշտ ենք համարել կատարել որոշակի փոփոխություններ և հավելումներ, որոնք առանձնացվում են բնագրից՝ ըստ արդի տեքստաբանական չափանիշների:

Ներկայացվող փոխադրմանը կցում ենք ծանոթագրությունների բաժին, որտեղ առկա են ինչպես մեր օգտագործած աղբյուրների տեխնիկական նկարագիրը, այնպես էլ մեր ընտրած հիմնական աղբյուրների միջև հիմնական տարբերությունները. առավել մանրամասն բնագրագիտական տվյալները կներկայացվեն արդեն Բաբաջանյանի երկերի լիակատար ժողովածուի համապատասխան հատորում:

ԱՐՏՅՈՒ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
Արվեստաբան

ՀՐԱՅՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ



Մարդ մնալու համար ազնվությունն է կարևոր, Օդաչու դառնալու համար՝ թռիչքը ճախրանքի վերածելը, իսկ հայ լինելու համար՝ պատասխանատվություն ունենալը... Գայրենիքը՝ վեր է ու վեհ ծնողքիս սնան: Այն Գայրի միակ հանգրվանն է:

Գայրենյաց պաշտպանների՝ հերոսների մասին թերևս կարելի է երկար խոսել, կարելի է նաև լռել... սակայն ինչ էլ որ անենք միևնույն է նրանց արարքը վեր ու վեհ է մեր ցանկացած քայլից: Գիշտությունն այն միակ արդարացուն է, որ կամրջվել է նրանց ու մեր միջև, որ հնարավորություն է տալիս նրանց տեսակով չափել աշխարհն ու մեզ: Պատմական ու քաղաքական վայրիվերումների հորձանուտուն այս անհատները քաջ գիտակցելով իրենց արարքի կարևորությունը միշտ զերծ են մնացել ամենից: Իսկ աշխարհը ժամանակի մեջ ու ժամանակի հետ փոփոխվել ու փոփոխվում է, հաստատուն թողնելով նրանց մեծ լինելը, նրանց յուրօրինակ տարբերությունը մյուսներից: Որքան դաժան է ժամանակը նույնքան էլ ազնիվ է, որովհետև ժամանակի ու տարիների հեռավորությունը բարձրացնում է նրանց ու սրբագրում անուններ, որ սերունդների շուրթերից հավերժ հնչելու են:



Ինչպիսի կամք ու արիություն պետք է ունենալ դիմակայելու մայրական աղերսանքին ու մանկան թողվանքին, ետևում թողնելով ապահով աշխատանքը ռուսական ավիացիայում, վերջապես ինչը կարող էր էլ ավելի կարևոր լինել: Գայրի ու իր նմանների պարագայում, իհարկե, միայն հայրենյաց կանչը: Այստեղ հարկավոր է կանգ առնել, որովհետև մարդու շունչը կտրվում է միայն մտածելուց այն մասին, թե կգա մի օր, որ պետք է ընտրություն կատարել ծնողի ու Գայրենիքի միջև: Ահա, առեղծվածային երիտասարդի, Մի-8 ուղղաթիռի հրամանատար Գայրի Մեսրոպի Կիրակոսյանի կյանքն այսպես վերածվեց լեգենդի: Պատմական Արցախի աշխարհի կանչով շատերի նման նա էլ վերադարձավ Գայրենիք: Թե ինչպես կարողացավ իր ապրած կարճատև, բայց իմաստավոր կյանքով միանալ վասն հայրենյաց հերոսապատմանը, ինչպես նպատակային արված յուրաքանչյուր քայլ դարձավ հաղթանակին մոտենալու գրավական, ցույց տվեց ժամանակը: Քաղաքացիական ուղղաթիռով ռազմական գործողություններին մասնակցող օդաչուն միայն կարող է պատկերացնել պատասխանատվության չափը, հնարավորությունների սղությունը: Սա առանձնակի հմտություն էր պահանջում ու անհնարինը հնարավոր դարձնելու մեծագույն կարողություն:



Գայրի Մեսրոպի Կիրակոսյան (1961 Լոռու մարզ ք. Ալավերդի -1992 Արցախի Գանրապետություն, նախկին Շահումյանի շրջան՝ Գյուլիստան) Երևանի Եռաբլուր գերեզմանատուն

Օդաչու դառնալու մանկական բաղձանքն այլևս կյանքի էր կոչված: Ռուսաստանի Դաշնության Սալիխարդ քաղաքում իր հմտությամբ բազմիցս աչքի ընկած օդաչուն, ով լավ ընկերոջ ու ամուր կամքի տեր տղակարգու համբավ ուներ ընկերների շրջանում հոժարակամ հայտնվեց Արցախյան պատերազմի կիզակետում: 1990-1992 թվականները ծանր փորձության տարիներ էին, ինչին Գայրը դիմակայեց տղամարդուն վայել: Ծանրագույն թռիչքներ Գետաշեն, Մարտունաշեն, Գոռաթառ, Մոխրաթառ... Մարտակերտ, Մարտունի, Ստեփանակերտ, Գայրաստանի սահմանամերձ շրջանները... Թվարկած թռիչքները Օդաչուական հատուկ գործույթում իր իսկ ձեռքով գրանցվածներից մի քանիսն են ընդամենը: Անհնարինը հնարավոր դարձնելու նրա կարողությունը դարձավ նրա ռազմական թռիչքների իմաստը: Սակայն թռիչքը ճախրանքի վերածելու նրա մեծ կարողությունն ավաղ ընդհատվեց 1992 թվականի սեպտեմբերի 29-ին: Եռաբլուր Պանթեոնը դարձավ նրա վերջին հանգրվանը: Այդպես էր ցանկացել ու մի առիթով ասել ծնողներին, թե մի բան պատահի իրեն, չբաժանեն մարտական ընկերներից: Զերոսներն այսպիսին են, նրանք միշտ համոզված են ինչ են

անում, և ինչու են անում: Զենց սրանում է նրանց մարդ-առեղծված լինելու գաղտնիքը: Օդաչու-հրամանատար Գայրի Կիրակոսյանի անմահության առավելագույն դարձան «Մարտական խաչ» և «Արիության» մեդալները: Գուցե զարմանալի է, բայց անմահությունը խոսել գիտի: Գայրի պարագայում դա արտահայտվեց իր հմտությունների շնորհիվ փրկված մարդկանց պատմություններում ու անմեղ մանուկների թոթվանքներում:

Եռեսունմեկը նոր բոլորած երիտասարդ օդաչու-հրամանատարը հետմահու պարգևատրվեց Արցախի «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, այնուհետև «Արիության» մեդալով:

Ճակատագրով բաժին հասած կյանքի ու մահվան այս պայքարը «Արցախյան գոյամարտ» անունով դեռ դարեդար կպատմվի: Երիտասարդներ, որ չնայած նահատակվեցին, սակայն հաղթեցին, հաղթանակով պսակելով ու հիրավի ոսկյա տառերով գրելով իրենց անունները հայոց ազատամարտի պատմության էջերում:

Ահա Գայրի մարտական ուղին, որը նրա ռազմական սխրագործությունների հակիրճ պատմությունն է:

ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
լրագրող, քանոնահարուսի, մանկավարժ

Մարտական ուղի
Մի-8 ուղղաթիռի օդաչու-հրամանատար
Գայրի Մեսրոպի Կիրակոսյան

Սկսած 1990 թվականից մինչև 1992 թվականն ակտիվորեն մասնակցել է Գայրաստանի Գանրապետության սահմանամերձ շրջանների, և՛ Լեռնային Ղարաբաղի Գանրապետության ինքնապաշտպանությանը: Աչքի է ընկել այդ շրջանների կամավորական ազատամարտիկ-ջոկատներին վառելանյութ, զենք - զինամթերք, սննդամթերք, դեղորայք և բազում այլ կարգի օգնություններ իրականացնելիս, մյուս կողմից էլ ցույց է տվել խիստ արդյունավետ աջակցություն՝ վիրավորներ ու զոհված ազատամարտիկներ տեղափոխելիս:

Գրամանատարության տված յուրաքանչյուր հանձնարարություն կատարել է իսկապես անձնագրի պատրաստականությամբ: Ազգային ազատագրական պայքարում միշտ դրսևորել է բարձր պրոֆեսիոնալիզմ և օրինակելի խիզախություն, անընկճելի կամք, անսահման անկեղծություն և Գայրենիքի հանդեպ սրբասուրբ նվիրվածություն, ինչի շնորհիվ վայելել է թե՛ հրամանատարության, թե՛ զինակից-գործընկերների սրտալի հարգանքին:

Սույն մեծավաստակ օդաչու-ազատամարտիկի կատարած բազմաթիվ սխրագործություններից ահա մեկի՝ վերջինի հակիրճ նկարագրությունը: 1992 թվականի աշնանը, երբ Արցախի հայ բնակչությունն օրհասական ծանր ժամանակաշրջան էր ապրում գտնվելով ուղղակի թշնամու երախում, և երբ դրությունից իսկույն դուրս գալու միակ ելքը պետք է վճռեր երկու ուղղաթիռների թռիչքը հակառակորդի գնդացրային տարափի միջով՝ իրագործելով հրամանատարության համապատասխան առաջադրանքը, հիշյալ երկու ուղղաթիռներից մեկի օդաչու-հրամանատարը հիվանդության պատճառով չներկայացավ թռիչքի: Գայրի Կիրակոսյանը անտեսելով անխուսափելի մահվան վտանգը, հոժարակամ ստանձնեց հենց այդ ուղղաթիռով տվյալ առաջադրանքի իրագործումը: Կարևորագույն թռիչքը կայացավ, ռազմական առաջադրանքը գերազանց կատարվեց, սակայն մեծ հայրենասեր Գայրի Կիրակոսյանը բոցավառվող իր ուղղաթիռում ափսոս նահատակվեց: Որ նա կանխավ գիտակցում էր այդ հանձնարարության կատարման ընթացքում սպասվող մահաբեր վտանգի մասին, հետագայում վկայեցին նրա օդաչու ընկերները: Թռիչքից առաջ Գայրյան ասել է. «Քանի որ առաջադրանքի կատարումը բախտորոշ է, իսկ թշնամու կրակահերթերն էլ չեն դադարում, մենք հազիվ թե վերադառնանք, իմ ավտոյի բանալին վերցրեք, կտաք ծնողներին»:



Այդ օրվա վերոհիշյալ գործողությունների մասնակցները վկայեցին նրա ոչ միայն բացառիկ հայրենասիրության, այլև Գայրի Կիրակոսյան օդաչու - ազատամարտիկի ճկուն ու արդյունավետ զանազան հմտությունների մասին, ինչը կարծում ենք ապագայում ուսանելի դաս է հանդիսանալու հայ օդաչուների համար առհասարակ:

1990 թվականից մինչև 1992 թվականն ընկած ժամանակահատվածում ընդհանուր թռիչքածանը քաղաքացիական ուղղաթիռներով դեպի՝ Լեռնային Ղարաբաղ, Շահումյանի և Գետաշենի շրջաններ կազմել է 850 ժամ: Ռազմական ինքնաթիռներով կատարած թռիչքների քանակը կապված մարտական գործողությունների հետ կազմել է ----- թռիչք:

Ձեռիվել է «29» 09. 1992 թ. հերթական մարտական առաջադրանք կատարելիս:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՌԴԻՆԵՐ» ՊՓԲԸ
Ուղղաթիռների շահագործման
Ծառայության ղեկավար՝

/Ո.ՄԵՏՐՈՍՅԱՆ/

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԵՃԵԱՆ



Արագածոտնի բնիկ արվեստագետները
Գ. Շաղոխյանի հետ: Մ. Փիտեճեան
Օշակագ. 2008 թ.



Ղ. Սարյանի նվիրված «Երաժշտական Դասընթաց» ամսագրի
3 (8) 2005 թ. շնորհանդեսը Սարյանի արվեստանոցում

Կյանքի 84 տարեկանում, տարեդարձից 17 օր առաջ կնքեց իր մահկանացուն միջազգային ճանաչում ունեցող երաժիշտ, Մեծատառով Մարդ, ԵՊԿ պատվավոր պրոֆեսոր (սակավաթիվ գործիչներ ունեն այս պատիվը), միջնադարագետ, հատկապես եկեղեցական երաժշտության գիտակ, քանի որ նաև վարդապետության էր հասել իր կյանքի ճանապարհով անցնելիս, մանկավարժ (հասած մինչև միջնակարգ կրթության դպրոցի տնօրենի), երաժշտագետ կապիտալ աշխատությունների հեղինակ Գրիգոր Փիտեճեանը: Սիրված և ընկերացած «ԵՊԿ հրատարակչության» հետ՝ շնորհիվ տողերիս հեղինակի, բարեկամական ու հայեր-նասիրական կապերով ու գործերով պսակված էր նրա մտերմությունը ու Դայրենիք այցելությունները հատկապես կյանքի վերջին 15 տարիներին, որոնք և բերեցին նրա գիտական գործունեության պտուղները: Պարոն Փիտեճեանը շատ բարի, հայրենասեր, մարդասեր անձնավորություն էր: Եվ իհարկե սկզբունքային, օրենսկտիվ և անզիջում գիտնական: Արտակարգ աշխատասեր ու լեզուների գերազանց իմացությամբ ու հիանալի խմբագիր: Դուշերը շատ են, մենք այցելում էինք Դայրենիքի տարբեր վայրեր, քանի որ նա երբեք չէր ապրել Դայրենիքում ծնված լի-նելով եղեռնից եղեռնապուրծ ընտանիքում Եփպատոսում՝ կիսելով հայի ճակատագիրը, իր ծառայությունը բերելով ամբողջ ընթացքում ազգին ու հայրենի արվեստին ու մշակույթին:

ԵՊԿ-ի հետ նրա բարեկամության մասին տես՝ հաջորդ համարում

Գրիգոր Փիտեճեան (աւագանի անունով՝ Յակոբ) ծնած է 1935-ին Աղեքսանդրիա-Եփպատոս, եւ նախնական ուսումը ստացած՝ տեղւոյն Պողոսեան Ազգային Վարժարանին մէջ, ուր երաժշտութեան ուսուցիչն էր եղած տաղանդաւոր երաժիշտ-խմբավար Կարպիս Ափրիկեան: Սերած ըլլալով երաժշտական աշխարհին եւ Կարապետ Խորեղբայրէն, որ ինքնուս երաժիշտ էր, կը սորվի նուազել իրեն տրամադրելի մանտոլին նուագարանը: Իսկ, իր ունեցած հարուստ երգապաշարին սկզբնաղբիւրը կը հանդիսանայ մայրը՝ Մարի Փիտեճեան:

Սակայն, Փիտեճեանի Դայրենի ու ազգային դաստիարակութեան բուն օջախը եղած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը, ուր, ան սնած ու մեծցած է ազգային եւ կրօնական աւանդութիւններով յագեցած հարուստ մթնոլորտի մը մէջ: Դու, ան կը հմայուի ու կը կլանուի Դայ եկեղեցական երաժշտութեան վեհութեամբը եւ կը ծծէ անոր աւիշը իր իսկ արմատէն: Աշակերտութեան արդէն իսկ երրորդ տարին կը ստանձնէ դասապետութեան պարտականութիւն, որմէ յետոյ իրեն կը վստահուի դարապետի պաշտօնը: Դպրեվանքի երաժշտութեան դասընթացի իր ուսուցիչը կ'ըլլայ սկանաւոր երաժիշտ, յորինող-ղեկավար՝ Դամբարձուն Պերպերեան, իսկ եկեղեցական երաժշտութեան ուսուցիչը՝ հմուտ շարականագետ Գնէլ Վրդ. Ճերեճեան:

Գրիգոր Փիտեճեան Դպրեվանքի շրջանը աւարտելէ յետոյ կը յաճախէ Պէյրութի Պետական երաժշտանոցը, միաժամանակ կը դառնայ ուսուցիչ Դպրեվանքի, եւ կը վարէ Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի երաժշտապետութեան պատասխանատու պաշտօնը: Պաշտօն՝ որ կը պահանջէ խորունկ ճանաչում եւ ծանօթութիւն Դայ եկեղեցական երաժշտութեան եւ զայն կատարելու ու երգչախումբ ղեկավարելու կարողութիւն:

1960-ին, կը կազմէ երեսուն հոգինոց արական խումբ մը, յատկապէս հանդիսաւոր օրերուն երգելու համար Կոմիտաս Վարդապետի մշակած Պատարագը Մայր Տաճարէն ներս:

1962-ին, Փիտեճեան Նիւ Եորք հաստատուելէ ետք, Կոմիտաս Վարդապետի մշանաւոր իննգ սաներէն բանահաւաք եւ երգագրագետ՝ Միլիթան Թումանճանի հետ ու անոր օրինութեամբ կը կազմէ «Գուսան» երգչախումբը: Տասը տարիներէ աւելի շարունակ կը դաստիարակէ իր անդամները, բարձրորակ համերգներով կը հմայէ հասարակութիւնը եւ կը յագեցնէ Դայ երգին ու Դայրենիքի կարօտ հոգիներուն պայակը:

1964-ին, պարուստոյ Նուարդ Դամբարեանի հետ կը հիմնէ 120 հոգինոց Ամերիկայի առաջին երգի-պարի անսամբլը, որ Նիւ Եորքի Դամաշխարհային Տօնավաճառին մէջ յատուկ ծրագրով 10,000-է աւելի Դայ եւ օտար հասարակութեան կը հրամցնէ Դայ ժողովրդական երգն ու պարը:

Այս առթիւ Նիւ Եորքի Կառավարիչ Nelson Rockefeller-ի կը պարգևատրուի յատուկ գնահատագրով:

Փիտեճեան յաճախեց Նիւ Եորքի հռչակաւոր Մաննէս երաժշտանոցը, ուրկէ, որպէս երգչախմբային ղեկավար, վկայուեցաւ Պասակաւորի (B.S.) տիտղոսով: Ապա, աւելի խորացնելով իր երաժշտագիտական ուսումը Դանթըր Գոլէճի մէջ, ստացաւ Մագիստրոսի (M.S.) տիտղոս:

1969-ին, որպէս Սփիւնջահայ երաժիշտ, Դայաստանի Արտասահմանի Դետ Մշակութային Կապերի Կոմիտէին կողմէ կը հրաւիրուի Դայրենիք՝ մասնակցելու համար Կոմիտաս Վարդապետի Ծննդեան Դարիւրամեակի տօնակատարութեանը:

1969-1970 ուսումնական տարեշրջանին, կը վարէ Մաննէս երաժշտանոցի երգչախումբի փոխ-ղեկավարի պաշտօնը:

Տարիներով դասաւանդած է Նիւ Եորքի Պետական Վարժարանէ ներս որպէս վկայեալ երաժշտութեան ուսուցիչ:

Փիտեճեան եղաւ Նիւ Եորքի Դայ Մշակութային Միութեան,

ան, այժմ Դամազգային-հիմնադրի անդամներէն մին եւ իր «Գուսան» երգչախումբը դարձուց հիմն ու կորիզը նորակազմ միութեան:

1970-1981, կը ղեկավարէ Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարի մասնագիտացված երգչախումբը, զոր ինք հիմնած էր:

Լարային եւ փողային գործիքներու խումբերով իր մշակած կրօնական ու ազգային-յեղովորական երգերով ելոյթները ցարդ կը մնան անզուգական:

Իր յորինումներէն եւ մշակումներէն ոմանք կատարուած են Լիբանանի, Սուրիոյ, Եփպատոսի, Յորդանանի, Իրանի, Իրաքի, Դայաստանի, Գանատայի, Յունաստանի, Արժանթինի, Ֆրանսայի, եւ ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու մէջ:

Փիտեճեան, երաժշտական ուսումնասիրութիւններով եւ քննախօսականներով կը մասնակցի Դայ մամուլին (Սփիւնջ եւ Դայրենիք):

Յատուկ դասախօսութիւններով ելոյթներ ունեցած է եւ կ'ունենայ Միացեալ Նահանգաց Նիւ Եորքի, Նիւ Ճրոքի, Պոսթոնի, Կլէմսոնի, Ֆրեդոնի, Վալիի, Սան Ֆրանսիսկոյի, Ուաշինկթոնի, Միչիկընի, ինչպէս նաեւ Մոնթրէալի (Գանատա) ու Աղեքսանդրիոյ (Եփպատոս) Դայ գաղութներուն մէջ:

Իր երաժշտական գործերը հրատարակուած են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Կաթողիկոսութեան պաշտօնաթերթ «Էջմիածին»-ին մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնաթերթ «Դասկ»-ին մէջ, ինչպէս նաեւ Առաջնորդարաններու եւ Դամազգայինի կողմէ:

Գրիգոր Փիտեճեան հեղինակ է նաեւ իննգ գիրքերու. «Դայ Յեղափոխական Երգերուն Տեղը Դայ Երաժշտութեան Պատմութեան Մէջ»՝ հրատարակուած Նիւ Եորք, «Գրիգոր Նարեկացի Շարականագիր»՝ հրատարակուած Էջմիածին եւ «Անձինք Նուիրեալք-Շարականք»՝ հրատարակուած Նիւ Եորք, Սիւ հրատարակչութեան կողմէ, զոր ընդունուած է Երեսնի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի Միջնադարագիտութեան բաժնի ծրագրին մէջ, «Քրիստափոր Կարա-Մուրզա»՝ հրատարակուած ԵՊԿ հրատարակչութեան կողմէ, Երեսն 2013-ին եւ «Դայ եկեղեցւոյ երաժշտութիւնը», լոյս տեսած Նիւ Եորքի Ս. Վարդան հրատարակչութեան կողմէ, 2015-ին:

Մեծ եղեռնի 90-ամեակին առթիւ, հրատարակուեցաւ նահատակաց յիշատակին նուիրուած «Երգապսակ» անուն խտասալիկը (երգչախմբային եւ նուագախմբային) ղեկավարուած Գրիգոր Փիտեճեանի կողմէ:

Ան, տարիներու ընթացքին արժանացած է բազում գնահատագիրներու եւ յուշատախտակներու եւ ոսկեպատ ճպտի:

Նոյեմբեր 11, 2007-ին, առ ի գնահատութիւն իր երաժշտական տասնամեակներու ազգօգուտ գործերուն, Փիտեճեան արժանացաւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Դայր Դայրապետի սրբատառ Կոնդակին եւ Ս. Ներսէ Շնորհալի պատուոյ բարձրագոյն շքանշանին:

Նոյեմբեր 5, 2008-ին «Դամազգային Դայ Կրթական եւ Մշակութային Միութիւն»-ի Կեդրոնական Վարչութիւնը ոսկեայ մետալով պարգևատրեց Գրիգոր Փիտեճեանը. վկայագրին վրայ հաստատելով թէ՛ ան «Երկարամեայ անսակարկ նուիրումով ծառայած է հայ երաժշտութեան ծանօթացման եւ զարգացման աշխատանքին»:

Նոյեմբեր 17, 2008-ին «Դայաստանի Ազգային Գրադարան»-ի Ընդհանուր Տնօրենին՝ պատուարժան Տիար Դաւիթ Սարգսեանի կողմէ ազնուօրէն կազմակերպուած Փիտեճեանի երեք գիրքերուն եւ «Երգապսակ. Եղեռնի Նահատակաց Յիշատակին» խտասալիկին նուիրուած շնորհանդէսի ընթացքին, «Կոմպոզիտորների եւ երաժշտագետների Միութիւն»-ի նախագահը՝ երաժշտահան Տիար Ռոբերթ Ամիրխանեան, բարձր գնահատելով Փիտեճեանի վաստակը, պաշտօնապէս յայտարարեց անոր անդամակցութիւնը

(Ամիրխանեանի խօսքերով) «Դայ երաժշտական մշակույթին միջնաբերդ հանդիսացող Կոմպոզիտորների եւ երաժշտագետների Միութեան»:

Ապա մեծ հանդիսութեամբ Փիտեճեանին յանձնեց անդամակցութեան տետրակն ու քարոզը: Երեսնի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի Տնօրեն՝ Տիար Սերգեյ Սարաճեանի եւ հրատարակչական բաժնի Վարիչ՝ «ԵՊԿ հրատարակչութեան» Տնօրենուհի, երաժշտագիտուհի՝ Տիկին. Գոհար Շաղոյեանի ձեռնարկունով Նոյեմբեր 23, 2010-ին, որպէս յարգանքի արտայայտութիւն, Արամ Խաչատուրեան Տուն-Թանգարանի սրահին մէջ, Յոբելիանական մեծաշուք հանդիսութեամբ՝ երգչախումբերու, մեներգողներու, նուագողներու կատարումներով (նաեւ Փիտեճեանի գործերէն) եւ դասախօսութիւն, փորձերներու ելոյթներով, ինչպէս նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Դայր Դայրապետին ներկայացուցիչ՝ Բարձր. Տ. Տաթև Արքեպս. Սարգիսեանի փոխանցած Վեհափառ Դայրապետին օրհնութիւններով, շնորհաւորանքներով ու իր ալ անձնական յուշերու զուարթ պատումներով եւ խանդավառ մաղթանքներով նշուեցաւ Գրիգոր Փիտեճեանի ծննդեան 75-ամեակն ու երաժշտական գործունեութեան 50-ամեակը:

Այս Յոբելյանի առիթիւ, Երեսնի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի երաժշտագիտական ամսագրին՝ «Երաժշտական Դայաստան»-ի հմբազարպետուհի՝ Տիկին. Գոհար Շաղոյեան, ամսագրին թիւ 2 (37) 2010-ը նուիրեց Գրիգոր Փիտեճեանի Ծննդեան 75-ամեակին եւ գործունեութեան 50-ամեակին, ներկայացնելով անոր կեանքի եւ գործունեութեան հարուստ երեսները:

Նոյեմբեր 29, 2010-ին, Երեսնի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի երաժշտագիտական ամսագրին՝ «Երաժշտական Դայաստան»-ի հմբազարպետուհի՝ Տիկին. Գոհար Շաղոյեան, ամսագրին թիւ 2 (37) 2010-ը նուիրեց Գրիգոր Փիտեճեանի Ծննդեան 75-ամեակին եւ գործունեութեան 50-ամեակին, ներկայացնելով անոր կեանքի եւ գործունեութեան հարուստ երեսները:

Նոյեմբեր 29, 2010-ին, Երեսնի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի երաժշտագիտական ամսագրին՝ «Երաժշտական Դայաստան»-ի հմբազարպետուհի՝ Տիկին. Գոհար Շաղոյեան, ամսագրին թիւ 2 (37) 2010-ը նուիրեց Գրիգոր Փիտեճեանի Ծննդեան 75-ամեակին եւ գործունեութեան 50-ամեակին, ներկայացնելով անոր կեանքի եւ գործունեութեան հարուստ երեսները:

Նոյեմբեր 29, 2010-ին, Երեսնի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի երաժշտագիտական ամսագրին՝ «Երաժշտական Դայաստան»-ի հմբազարպետուհի՝ Տիկին. Գոհար Շաղոյեան, ամսագրին թիւ 2 (37) 2010-ը նուիրեց Գրիգոր Փիտեճեանի Ծննդեան 75-ամեակին եւ գործունեութեան 50-ամեակին, ներկայացնելով անոր կեանքի եւ գործունեութեան հարուստ երեսները:

Նոյեմբեր 29, 2010-ին, Երեսնի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի երաժշտագիտական ամսագրին՝ «Երաժշտական Դայաստան»-ի հմբազարպետուհի՝ Տիկին. Գոհար Շաղոյեան, ամսագրին թիւ 2 (37) 2010-ը նուիրեց Գրիգոր Փիտեճեանի Ծննդեան 75-ամեակին եւ գործունեութեան 50-ամեակին, ներկայացնելով անոր կեանքի եւ գործունեութեան հարուստ երեսները:

Նոյեմբեր 29, 2010-ին, Երեսնի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի երաժշտագիտական ամսագրին՝ «Երաժշտական Դայաստան»-ի հմբազարպետուհի՝ Տիկին. Գոհար Շաղոյեան, ամսագրին թիւ 2 (37) 2010-ը նուիրեց Գրիգոր Փիտեճեանի Ծննդեան 75-ամեակին եւ գործունեութեան 50-ամեակին, ներկայացնելով անոր կեանքի եւ գործունեութեան հարուստ երեսները:

Նոյեմբեր 29, 2010-ին, Երեսնի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի երաժշտագիտական ամսագրին՝ «Երաժշտական Դայաստան»-ի հմբազարպետուհի՝ Տիկին. Գոհար Շաղոյեան, ամսագրին թիւ 2 (37) 2010-ը նուիրեց Գրիգոր Փիտեճեանի Ծննդեան 75-ամեակին եւ գործունեութեան 50-ամեակին, ներկայացնելով անոր կեանքի եւ գործունեութեան հարուստ երեսները:

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԵՃԵԱՆԻ
անտիպ գրքից իր ուղղումներով
գրված կենսագրականը

Ամբողջական մյուսը պատրաստեց՝
ԳՂԴԱՐ ՇԱԳՈՅԱՆԸ
«ԵՊԿ հրատարակչութեան» հրատարակիչ

ՍՓՅՈՒՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆՆԵՐ

Քանի որ ներկայացվող նյութը հայկական սփյուռքի մասին է, ուստի կարևոր ենք համարում որոշ պարզաբանումներ տալ, թե ինչ ասել է Սփյուռք, ինչպես նաև դրա առաջացման պատճառները: Հայկական սփյուռքը ասելով հասկանում ենք, որ խոսքը հայերի այն համայնքների մասին է, որոնք կազմավորվել են Արևմտյան և Արևելյան Հայաստանի սահմաններից դուրս, երկրագնդի գրեթե բոլոր մայրցամաքներում, պատմության տարբեր ժամանակաշրջաններում, նշված վայրերը տարբեր պատճառներով լքած, կամ արտագաղթած հայերից: Կարելի է ասել, որ արտագաղթը բնորոշ է աշխարհի բոլոր ժողովուրդներին, որոնք կարող են հայտնվել հետևյալ իրավիճակներում, իսկ այդ իրավիճակներն էլ իրենց հերթին կարող են հող նախապատրաստել առաջին դեպքում տվյալ ժողովրդի ինքնակամ արտագաղթի, իսկ երկրորդ դեպքում բռնի արտագաղթի, կամ բռնի տեղահանման համար: Առաջին իրավիճակը այն է, երբ տվյալ ժողովուրդն ունի ինքնուրույն պետություն և ապրում է իր սեփական Հայրենիքում: Տվյալ պարագայում արտագաղթը պայմանավորված է երկու հիմնական գործոններով՝ տնտեսական և քաղաքական: Երկրորդ իրավիճակն ինքնուրույն պետականության բացակայությունն է, իսկ այս իրավիճակում արտագաղթի նախորդ երկու պատճառներից, տնտեսական և քաղաքական, ավելանում է ևս մեկ պատճառ՝ կրոնական: Ինչպես բոլոր ազգերի, այդ թվում հայերի մասայական արտագաղթի գլխավոր պատճառներից մեկն էլ տարբեր երկրների հետ մղվող պատերազմներն են, մասնավորապես մեզ հայերիս համար տարբեր քոչվոր ժողովուրդների (արաբներ, սելջուկներ, մոնղոլներ) ասպատակություններն են, որոնց պատճառով հայերը ստիպված գաղթել են Ասորիք, Միջագետք, Ղրիմ, Ռուսիան, Լեհաստան, Հունգարիա, Բուլղարիա, Կիևյան Ռուսիա, Փոքր Ասիայի ծովամերձ շրջաններ՝ ամենուրեք հիմնելով համայնքներ: Այդպիսի մի համայնք էլ կազմավորվել է Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաքում, որի հետ էլ կապված է այս տարվա ապրիլ ամսին այնտեղ կատարած մեր այցելությունը: Այցելությունը առաքելության, կազմի և այնտեղից ստացած մեր տպավորությունների մասին կներկայացնենք քիչ հետո, իսկ հիմա փորձենք մի փոքր պատմական էքսկուրս կատարել, հասկանալու համար, թե ինչպես են հայերը հայտնվել Կուբանում և ինչպես են հիմնադրել Արմավիր քաղաքը: «Օսմանյան կայսրության կողմից քրիստոնյաների նկատմամբ հալածանքները համագեցրեցին հայկական սփյուռքի բանակական աճի: Հենց այս ժամանակաշրջանում է Հյուսիսային Կովկասը դառնում հայ ժողովրդի վերաբնակեցման կարևոր կենտրոններից մեկը: Հայերի մեծ մասը Կուբան է մեկնել դեռ XV դարի վերջին, երբ 1475 թվականին Օսմանյան կայսրությունը գրավեց Ղրիմն ու Թեոդորոսի իշխանությունը: Արդյունքում հայերը սկսեցին գաղթել Սուլդուխ և Լեհաստան: Ղրիմի հայերի մի մասն էլ հաստատվեց Հյուսիսային Կովկասի լեռներում աղիզների շրջանում: Համատեղ գոյակցության երեք հարյուրամյակների ընթացքում հայերն ընդունեցին վերջիններիս կենցաղի առանձնահատկությունները և մշակույթը: Հայկական խոսքը սկսեց հնչել աղիզերենի նման: Հայ առաքելական եկեղեցուն պատկանելու հիշողությունը միայն օգնեց հայերին չկորցնելու իրենց ազգային պատկանելությունը: Արդյունքում ձևավորվեց հայ ժողովրդի նոր էթնիկ խումբ, որի ներկայացուցիչները հայտնի են որպես չերքեզահայեր կամ լեռնային հայեր: Ժամանակի ընթացքում թուրքերի էթնիկ և կրոնական էքսպանսիայի հետևանքով այս շրջաններում ևս իրավիճակը սրվում է: Հայերը որոշում են լքել նաև այս բնակավայրերը: Այդ մասին վկայում է չերքեզահայերի մասին առաջին փաստաթուղթը՝ Եկատիրինա 2-րդ կայսրուհուն ուղղված հայ հոգևորականի չթվագրված գեղույցը: Վերջինս փորձում էր կազմակերպել Հյուսիսային Կովկասի հայերի վերաբնակեցումը Ռուսական կայսրությունում: XVIII դարի վերջին այդ շրջաններում Օսմանյան կայսրության ազդեցության մեծացման պատճառով: Ռուսական իշխանություններն, իրենց քաղաքական և տնտեսական շահերից ելնելով, ողջունել են հայ հոգևորականի այս նախաձեռնությունը, սակայն միայն 1829 թ. Արդիանապոլիս պայմանագրից հետո հնարավոր դարձավ այն կյանքի կոչել: XIX դարում լեռնային շրջաններից դեպի ռուսական կայսրության հարթավայրային շրջաններ տեղափոխվելու արդյունքում 1839-ին նրանք հիմնում են ներկայիս Արմավիր քաղաքը: Ներկայումս չերքեզահայերը հիմնականում կենտրոնացած են Արմավիրում և Մայկոպում: Հայտնի չերքեզահայերից են Ֆրանսիացի գրող, Ֆրանսիական ակադեմիայի անդամ Անրի Տրուայան (Լևոն Ասլանի Թորոսյան), Քարեզործ, նավթարդյունահանող, միլիարդատեր Նիկոլայ Տարասովը և ԽՍՀՄ առաջին միլիոնատեր Արտյոմ Տարասովը» (<https://armedia.am/arm/news/22435/cherqezahayer-kamlernayin-hayer-ovqer-en-nranq.html>)



Պետրոս Պատկանյան

րից մինչ օրս: Երկար տարիներ այն պարզապես որպես «Հայկական բնակավայր» հիշատակվող առև էր: Կուբանյան գծի ղեկավար, գեներալ-մայոր բարոն Գ. Ֆ. Ֆոն Չասսը, չկամենալով ինքնուրույն որոշել բնակավայրի անունը, դիմեց հայ հոգևորականին, ում բազմաթիվ առաջարկներից այս մեկն արժանացավ տեղաբնակների հավանությանը, և բնակավայրն անվանվեց ի պատիվ հայոց մայրաքաղաք Արմավիրի: Ծիշտ է, տեղաբնակ հայերը դեռ XIV դարից էին հեռացել Հայրենիքից, սակայն բոլոր առաջարկներից ընտրեցին ամենահայեցին: Նրանց մեծ մասը արդեն չէր խոսում իր մայրենի լեզվով, սակայն արմատներից դեռ չէին հեռացել: Նրանց անվանում էին չերքեզահայեր. երկար տարիներ ապրելով լեռներից հեռու՝ հայերի այդ խումբը, չմոռանալով իր ծագումը, խոսում էր չերկեսերեն, կրում նրանց հագուստն ու յուրացրել էր նրանց ավանդույթների մի մասը: 1839-ին, տարբեր պատճառներով մինչ այդ Հայրենիքը լքած և Կովկասի սարերում աղիզների հետ բնակություն հաստատած հայերը ստիպված էին ապաստարան խնդրել Ռուսաստանից: Հենց ծագումով գերմանացի ռուսահայտակ բարոնն էլ շատ հարցներում օգնեց հայերին տեղափոխության հարցում, քանի որ մուսուլմանություն ընդունած Կովկասցի լեռներից սկսել էին «բարի աչքով չնայել» իրենց հավատքը չուրացող հայերին: Չերքեզահայերը, ռուսական զորքերի հովանու տակ, իրենց ամբողջ ունեցվածքով տեղափոխվեցին Ռուսիա և Կուբան գետերի հովտում գտնվող տարածք: Նրանց հիմնած բնակավայրը բաժանված էր թաղամասերի, որոնցից յուրաքանչյուրում ապրում էին նույն առևից տեղափոխվածները: Չերկասահայերի մշակույթի, կրոնի ու ավանդույթների պահպանման հետ է կապված մեկ այլ հայագի հոգևորական՝ Կարապետ Արծիվյանի անունը: Վերջինս դեռ 1815-ին, լինելով արդեն 50 տարեկան, տեղափոխվեց լեռներ ու, ծիծով շրջելով առևներում, շփվում էր տեղի հայերի հետ, ովքեր վաղուց արդեն ոչ միայն հայերեն խոսեց, այլև քրիստոնեական քարոզ չէին լսել: Նա կարծ ժամանակում մեծ ժողովրդականություն է վայելում ոչ միայն հայերի, այլև մյուս ժողովուրդների շրջանում: Լսելով չերքեզահայերի նոր բնակավայրի մասին նա լեռնաբնակ հայերի բազում ընտանիքներ է տեղափոխում այնտեղ ու ինքն էլ բնակություն է հաստատում հայաբնակ առևում, ուր ապրում է մինչև կյանքի վերջը՝ մահանալով 102 տարեկան հասակում: Հայերը նոր բնակավայրում շարունակում են զբաղվել առևտրով, արհեստներով, անասնապահությամբ ու հողագործությամբ: Նրանք մինչ օրս կարևոր դեր են խաղում քաղաքի կյանքում: Ըստ 2010

Կրասնոդարի Արմավիր քաղաքի հայ համայնքի նախագահ՝ Գրիշա Կարապետյան, Մուշեղ Հարությունյան, ՌԴ Հայերի միության Կրասնոդարի երկրամասի հարավ Արևելյան շրջանի մասնաճյուղի տնօրենի առաջին տեղակալ, Արմավիրի քաղաքային դումայի պատգամավոր՝ Ռազմիկ Վաղդիմիրի Հակոբյանց



Գագիկ Գինոսյանը պարային խմբերի անդամների և միջոցառման հյուրերի հետ



Մուշեղ Հարությունյանի ժողովրդական երգեցողության վարպետության դասընթացը «Կոմիտաս» երգի-պարի ամսանթվի երգչախմբի անդամների հետ



Բուլղարիայում Հայաստանի դեսպան՝ Արմեն Սարգսյան, Բուլղարիայի 1-ին կին վարչապետ Ռենետա Ինչուևա, Մուշեղ Հարությունյան



Մուշեղ Հարությունյան

թվականի տվյալների՝ Արմավիրում ապրում է մոտ 20000 հայ: Սա թվով 2-րդ էթնիկ խումբն է ռուսներից հետո և կազմում է քաղաքի բնակիչների ընդհանուր թվի 20%-ը: Արմավիրում գործում է հայկական համայնքը: 1840-ից մինչ օրս կանգուն է քաղաքի Վերափոխում Սուրբ Աստվածածնի հայկական եկեղեցին (<https://www.barometer.am/news/facts/20150324/757/>): Չնայած Սփյուռքում առկա դժվար և ոչ նպաստավոր պայմաններին, սփյուռքի մեր հայրենակիցները կարևորելով և բարձր գնահատելով մեր մշակութային արժեքները, միշտ էլ փնտրել և գտել են այդ արժեքները պահպանելու համար տարբեր ճանապարհներ և միջոցներ: Այդ նպատակին ծառայելու համար, հայկական գաղթավայրերում կառուցվել են և մինչ օրս էլ կառուցվում են եկեղեցիներ, հիմնվել են տարբեր մշակութային միություններ, կազմակերպություններ՝ հայկական ինքնությունը և Հայրենիքի հետ կապը ամուր պահելու համար: Մայր Հայաստանը սփյուռքի համար եղել է, կա և շարունակելու է մնալ որպես գլխավոր սնուցող զարկերակ, իհարկե թող աստված տա դրա կարիքը այլևս չզգացվի և մեր բառապաշարում էլ տեղ չգտնի Սփյուռք արտահայտությունը:

ՍՓՅՈՒՌՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ



«Կոմիտաս» երգի-պարի անսամբլի երգչախմբի ելույթը



«Վերածնունդ» դիոլահարների խմբի ելույթը




«Կոմիտաս» երգի-պարի անսամբլի պարի խումբը

14 Իմ խորին համոզմամբ բոլոր հայերին իրար կապող և միևնույն ժամանակ իրար հանդեպ պարտավորեցնող միակ գաղափարը դա հայապահպանության գաղափարն է, իսկ այդ գաղափարին ծառայելը յուրաքանչյուրիս սրբազան պարտքն է: Հայաստան սփյուռք կապը ամուր պահելու գործում մեծ դեր ունեն բոլոր մշակույթի գործիչները, որովհետև մեր մշակութային արժեքները, մեր ազգի ինքնահաստատման և ինքնության պահպանման երաշխավորներն են: Ես, որպես այդ մշակույթի գործիչներից մեկը, իմ մասնագիտության շրջանակներում, առաջին հերթին որպես սովորական հայ մարդ, հետո որպես գրական գործիչ և երգիչ-մանկավարժ, իմ ամբողջ գործունեության ընթացքում, մինչ օրս իմ համեստ ուժերի ներածի չափ, ծառայել և շարունակում եմ ծառայել այդ գործին, կամ գաղափարին՝ օգտագործելով բոլոր այն հնարավոր միջոցները, որոնց, բանականաբար, ես տիրապետում եմ: Թե սիրողական մակարդակով, թե որպես պրոֆեսիոնալ երգիչ ես մշտապես ձգտել եմ հայ երգը պրոպագանդել և տարածել թե Հայաստանում, թե Սփյուռքում՝ համերգների միջոցով, տեսաերիզների, ձայներիզների և տեսահոլովակների միջոցով, մեր ազգային երգ-երաժշտության պահպանման և փոխանցման հետ կապված իմ մտահոգություններն են ներկայացրել, գիտական և մեթոդական ձեռնարկների միջոցով: Բացի թվարկած միջոցներից ուզում եմ անդրադառնալ ևս երեք կարևոր միջոցի՝ երաժշտական հեռուստահաղորդաշար, երգարանների կազմում և հրատարակում, ինչպես նաև վարպետության դասեր: Հիմա հերթով անդրադառնամ այդ միջոցներին: 2008 թ. Կենտրոն հեռուստաընկերությունում հիմնել եմ «Հուլիսի քարավան» երաժշտական հաղորդաշարը, որը զուգահեռաբար ցուցադրվում էր Լոս Անջելեսի էյ Էյ 24 հայկական հեռուստատեսությամբ: 2014 թ. կազմել և հրատարակել եմ «Ձոներգեր» խորագրով իր նախադեպը չունեցող մի ինքնատիպ երգարան: 2018 թ. կազմել և հրատարակել եմ Երևան-Սոֆիա խորագրով հայ բուլղարական երգարան, որի պաշտոնական շնորհադեմ էլ կատարել ենք Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում, Հայաստանի արտգործնախարարության, Բուլղարիայում հայկական դեսպանության և Սոֆիայի հայ համայնքի հետ համատեղ: Շնորհանդեսի ընթացքում, Բուլղարիայում ճանաչված և սիրված դաշնակահար, երգիչ և երգահան Հայկաշուտ Աղասյանի հետ ներկայացրեցինք հայկական և բուլղարական երգեր: Ինձ համար մեծ պատիվ էր, որ շնորհանդեսի հյուրերի շարքում ներկա էր Բուլղարիայի առաջին կին վարչապետ Ռենետա Ինջուկան: Հիմա անդրադառնամ Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաք կատարած մեր այցելությանը, և մասնավորապես այդ այցելության ժամանակ անցկացրած վարպետության դասերին: Այցելության

առիթմը տեղի «Կոմիտաս» երգի-պարի անսամբլի 5-ամյակն էր: Ասեմ որ Հայաստանից հրավիրվածների կազմում երեքս էինք, ձեր խոնարհ ծառան, որպես ազգային երգի մասնագետ, «Կարին» ավանդական երգի-պարի անսամբլի ղեկավար Գագիկ Գինոսյանը և հայկական տարազների մասնագետ Արտյոմ Սյունեցին: Ի դեպ ասեմ, որ այդ հորելայական համերգին մենք ներկա էինք ոչ միայն հանդիսատեսի կարգավիճակով, այլ յուրաքանչյուրս հանդես եկանք մեր կատարումներով, ինչպես նաև մեր հայրենակիցներին ուղղված ողջույնի և քաջալերանքի խոսքերով: Համերգից առաջ ողջույնի խոսքով հանդես եկան Կրասնոդարի տարբեր քաղաքների հայ համայնքների ներկայացուցիչները, ինչպես նաև Արմավիրի քաղաքապետարանի մշակույթի բաժնի վարիչը և փոխքաղաքապետը, որոնք բացի շնորհավորանքի և ողջույնի խոսքերից դիպլոմներ շնորհեցին հայ համայնքին: Մեծ ուրախությամբ պիտի ասեմ, որ շատ տպավորված էինք, որովհետև տարիների քրտնաջան աշխատանք էր կատարված բոլոր առումներով: Ժամանակ, մարդկային էներգիա, բազմաթիվ հայկական տարազներ, նյութական միջոցներ, կազմակերպչական հսկայական աշխատանք և այլն, որի արդյունքն էլ այն ծավալուն համերգն էր որին մենք ականատես եղանք: Համերգի գերակշիռ համարները ներկայացրեց «Կոմիտաս» երգի պարի անսամբլը և այս պահին շատ տեղին է շնորհակալական, երախտագիտության և շնորհավորանքի խոսքեր հղել երկու գեղեցիկ հայուհիների, վոկալի մասնագետ Արևիտա Իշխանի Մարգարյանի և պարուսույց Արաքսյա Ալբերտի Բախշյանի հասցեին, իրենց կատարած ազգապահպան, կարևոր և արդյունավետ աշխատանքի համար: Բեմում ակնառես եղանք և վայելեցինք նաև «Վերածնունդ» դիոլահարների խմբի կատարումները գեղարվեստական ղեկավար Նարեկ Լիպարիտի Մովսիսյան, ինչպես նաև վայելեցինք հայ պոեզիայի մուշկներ, ութ տարեկան ասունքող Դավիթ Աղաջանյանի կատարմամբ (դաս. Գայանե Գիսանե Վարդանյան): Մեր աչքից չէր կարող վրիպել այն կարևոր փաստը, որ բոլոր ժանրերը ներկայացվեցին այդ ժանրերի երեք տարբեր տարիքային խմբերի՝ փոքր, միջին և ավագ սերնդի ներկայացուցիչների միջոցով: Բեմում տեսնելով 7-20 տարեկան հայ տղաների և աղջիկների ելույթները, հրժվանքի, ուրախության և ոգևորության պահեր ապրեցինք: Այդ հուսադրող իրականությունը, որին մենք ականատես եղանք փաստում է այն մասին, որ մեր ազգն անմահ է, ինչպես հայ մեծ բանաստեղծ Պարույր Սևակը կասեր՝ «կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք»: Համերգի հաջորդ օրը, հայկական մշակույթի տանը, կլոր սեղանի շուրջ, կայացավ հանդիպում Արմավիր քաղաքի և Կրասնոդարի տարբեր քաղաքներից եկած երգի պարի մասնագետների, համայնքի երկուցուցիչների և «Կոմիտաս» երգի պարի անսամբլի սաների հետ: Ներկաներին Հայաստանի տարբեր տարածաշրջանների տարազների մասին տեսագրությունների և կենդանի ցուցադրության միջոցով տեղեկություններ հաղորդեց տարազագետ Արտյոմ Սյունեցին՝ մեկնաբանելով այդ տարազներից յուրաքանչյուրի նշանակությունը և առանձնահատկությունները: Ազգային ավանդական պարերի հետ կապված ելույթով հանդես եկավ Կարին ավանդական երգի-պարի անսամբլի գեղարվեստական ղեկավար Գագիկ Գինոսյանը, անդրադառնալով մեր ազգային պարերի դերին և նշանակությանը: Ցուցադրվեց նաև հայկական պարերի նուտագրության մասին պատմող տեսանյութ: Հատուկ կարևորություն տալով մեր ռազմական պարերին, նպատակ ունենալով այդ պարերի միջոցով մեր ժողովրդին վերադարձնել նրա ազգային հպարտությունը, ազգային անպարտ ոգին՝ մասնավորապես Յարխուշտա ռազմական պարի կենդանի ցուցադրությամբ ներկաներին ծանոթացրեց այդ պարի բոլոր էլեմենտները, բացատրելով յուրաքանչյուր շարժման նպատակը և խորհուրդը: Որպես երգիչ մանկավարժ իմ գլխավոր առաքելությունը կայանում է հետևյալում՝ մեր ազգային երգը հնարավորինս անաղարտ պահելով փոխանցել մեր հաջորդ սերունդներին և հասարակական գիտակցության մեջ սերմանել շատ կարևոր մի գաղափար, այն է մեր երգ-երաժշտությունը ոչ միայն մեր



Բանաստեղծուհի Գայանե Գիսանե Վարդանյանն իր սանսամբլը Դավիթ Աղաջանյանի հետ



Սցենարիստ, ռեժիսոր Լուսին Մուսան, տարազագետ Արտյոմ Սյունեցի

ների միջոցով, մեր ազգային երգ-երաժշտության պահպանման և փոխանցման հետ կապված իմ մտահոգություններն են ներկայացրել, գիտական և մեթոդական ձեռնարկների միջոցով: Բացի թվարկած միջոցներից ուզում եմ անդրադառնալ ևս երեք կարևոր միջոցի՝ երաժշտական հեռուստահաղորդաշար, երգարանների կազմում և հրատարակում, ինչպես նաև վարպետության դասեր: Հիմա հերթով անդրադառնամ այդ միջոցներին: 2008 թ. Կենտրոն հեռուստաընկերությունում հիմնել եմ «Հուլիսի քարավան» երաժշտական հաղորդաշարը, որը զուգահեռաբար ցուցադրվում էր Լոս Անջելեսի էյ Էյ 24 հայկական հեռուստատեսությամբ: 2014 թ. կազմել և հրատարակել եմ «Ձոներգեր» խորագրով իր նախադեպը չունեցող մի ինքնատիպ երգարան: 2018 թ. կազմել և հրատարակել եմ Երևան-Սոֆիա խորագրով հայ բուլղարական երգարան, որի պաշտոնական շնորհադեմ էլ կատարել ենք Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում, Հայաստանի արտգործնախարարության, Բուլղարիայում հայկական դեսպանության և Սոֆիայի հայ համայնքի հետ համատեղ: Շնորհանդեսի ընթացքում, Բուլղարիայում ճանաչված և սիրված դաշնակահար, երգիչ և երգահան Հայկաշուտ Աղասյանի հետ ներկայացրեցինք հայկական և բուլղարական երգեր: Ինձ համար մեծ պատիվ էր, որ շնորհանդեսի հյուրերի շարքում ներկա էր Բուլղարիայի առաջին կին վարչապետ Ռենետա Ինջուկան: Հիմա անդրադառնամ Կրասնոդարի երկրամասի Արմավիր քաղաք կատարած մեր այցելությանը, և մասնավորապես այդ այցելության ժամանակ անցկացրած վարպետության դասերին: Այցելության

մարդ տեսակի պահպանման գործը միջոց է, այլ այդ տեսակի ծնունդ է, իսկ մեր ազգային երգ-երաժշտության հետ կապված, ներկաներին ուղղված իմ ասելիքի բուն էությունը հետևյալն էր, որ մեր ազգային երգ-երաժշտությունն ընկալենք որպես մեր մարդ տեսակը բնութագրող ազգային առանձնահատկություններից կազմված մի ամբողջություն: Իմ ելույթից առաջ ներկաներին ցուցադրեցինք մի փոքրիկ տեսանյութ, որը մի ծաղկաքաղ էր իմ հեղինակային «Հուլիսի քարավան» հաղորդաշարի թողարկումներից, որտեղ խտացրած կերպով ներկայացված էր վերը նշած մարդ տեսակի պահպանման նույն գաղափարը, որն էլ ըստ իս հանդիսատեսն է մեր ամբողջ հայության հավաքական գոյության խորհուրդն այս երկիր մուլորակի վրա: Անշուշտ մեր տեսակի պահպանումը և ինքնահաստատումը ավելի գործ է, երբ իր ուրբերի տակ ունի մեր հայրենի հողը, սուրբ հողը որի համար մեր ժողովուրդը դարբերով պայքար է մղել: Խոհանարիվելով այդ պայքարի բոլոր մասնակիցների ամբողջ համաստեղության առջև, այնուհանդերձ տեսանյութում ես առանձնացրել էի մեր ազատամարտիկներին կարևորելով նրանց դերը այդ պայքարի գործում, շեշտը դնելով հատկապես զոհված ազատամարտիկների վրա, որոնք ֆիզիկապես մեզ հետ չեն, քանի որ այդ պայքարի ժամանակ նրանք տվել են իրենց ունեցած ամենաթանկ բանը, իրենց կյանքը: Որպես նրանց ուղղված խոնարհանքի խոսք հնչեց մեր երջանակահիշատակ Արտեմ Մեջիդյանի խոսքը ինչպես մեկը, որը հենց այդպես էլ կոչվում է՝ «Ձոներգերին»: Կլոր սեղանից հետո, բնականաբար առանձին տեղերում անցկացրեցինք վարպետության դասերը և այդ կարճ ժամանակահատվածում փորձեցինք հնարավորինս առավելագույն չափով օգտակար լինել: Բացի երգչական տեխնիկայի հետ կապված որոշ խնդիրներին անդրադառնալուց, հնչեցրեցինք երգերի կենդանի կատարումներ, որոնց միջոցով մեր երեխաներին փորձեցինք ցույց տալ մեր կատարողական արվեստի առանձնահատկությունները, հասկացնելով որ հայկական կատարողական արվեստն ունի իր ուրույն հայկական ձեռնագիրը և ոչ մի ուրիշ ազգի կատարողական ձեռագրի մասն չի, ինչպես նաև մատնանշեցինք այն կարևոր հանգամանքները, որոնցով էլ պայմանավորված է մեր ուրույն ձեռագիրը: Հայկական երգերի ինքնատիպությունը, բովանդակային առումով, պայմանավորված է մեր ազգային առանձնահատկություններով, իսկ երգերի բուն կատարման կերպը և ընթացքը պայմանավորված է մեր ուրույն հնչյունարտաբերմամբ և հայերեն լեզվամտածողությամբ: Բացի այն օգտակարից, որ այդ կարճ ժամանակահատվածում, կլոր սեղանի շուրջ և վարպետության դասերի ժամանակ, փոխանցեցինք Արմավիր քաղաքի հայ համայնքի մեր հայրենակիցներին և «Կոմիտաս» երգի-պարի անսամբլի անդամներին, այդ օգտակարությունը փորձեցինք համալրել Հայաստանից մեզ հետ տարված, մեր կողմից կազմած և հրատարակած երգարաններով, մեր հեղինակային գրքերով, հայկական տարազի նմուշներով, ինչպես նաև մեթոդական և գիտական ձեռնարկներով, որոնք երգչին ուղղված Կոմիտասի տասը պատվիրանների հետ միասին նվիրեցինք «Կոմիտաս» երգի-պարի խմբին: Այս նախաձեռնության հեղինակները Սփյուռքի նախարարությունը և Կրասնոդարի Արմավիր քաղաքի հայ համայնքի նախագահ Գրիշա Կարապետյանն են: Նրանց հետ նախնական պայմանավորվածությամբ և փոխհամաձայնությամբ, կայացավ մեր այցելությունը: Մեզ մնում է շնորհակալանքի և երախտագիտության խոսքեր հղել Արմավիրի հայ համայնքին ջերմ ընդունելության և մեր հանդեպ պատշաճ վերաբերմունքի համար, ինչպես նաև այս նախաձեռնության հեղինակներին, միջոցառման բոլոր հովանավորներին, համերգի մասնակիցներին, Արմավիր քաղաքի հայ համայնքի այն անձանց, որոնց միջոցով և օգնությամբ կայացավ այս հետաքրքիր, բովանդակալից և կարևոր իրադարձությունը:

ՄՈՒՇԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կազմակերպիչ և խմբի ղեկավար,
ԵՊԿ ղոցնոս

« ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ »



ԵՊԿ ռեկտորատ, դասախոսներ

Ճշմարտության փնտրության և արվեստագիտության բեկնածու ամբիոնի վարիչ՝ ղոցենտ արվեստագիտության բեկնածու Լուսինե Սահակյան, Հայ երաժշտական ֆուլկորագիտության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ դասախոս, արվեստագիտության բեկնածու Նունե Աբանասյան, Կոմպոզիտորական ամբիոնի ամբիոնի վարիչ՝ դասախոս, արվեստագիտության բեկնածու Արթուր Ավանեսյան, Օպերային դիրիժորության և խմբավարության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Հովհաննես Միրզոյան, Օպերային պատրաստման ամբիոնի ամբիոնի վարիչ՝ ղոցենտ Կարեն Լավյան, Մեներգեցողության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Գայանե Գեղամյան, Հայոց ժողովրդական գործիքների և երգեցողության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ Արզա Բականյան, Եստրադային-ջազային ամբիոնի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նարինե Զարիֆյան, Հունամիտար գիտությունների ամբիոնի ամբիոնի վարիչ, ղոցենտ, արվեստագիտության բեկնածու Սոնա Պողապտյան: Եվ այլ աշխատանքային հարցերով ընթանում էր գիտական խորհուրդը:



Ս. Հովհաննիսյան, Ա. Հովհաննիսյան, Ծ. Մովսիսյան, Օ. Նուրիջանյան

հոնի ամբիոնի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարինե Օհանյան, Ընդհանուր դաշնամուրի ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Սվետլանա Դավթյան, Կատարողական արվեստի պատմության, տեսության և մանկավարժության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ ղոցենտ արվեստագիտության բեկնածու Լիլիթ Եփրեմյան, Կոմպոզիտորական արվեստի ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Սենորա Գյուլբուրդյան, Լարային ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Ալեքսանդր Կոստյան, Փողային և հարվածային գործիքների ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Գայանե Մուրադյան, Փողային կամերային անսամբլի ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Վաղարշակ Պեպանյան, Կվարտետի ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Էդիտա Ավագյան, Կամերային անսամբլի ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր

սոր Զուլիետա Սաչատրյան, Երաժշտության տեսության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ ղոցենտ արվեստագիտության բեկնածու Ռուզաննա Ստեփանյան, Երաժշտության պատմության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ ղոցենտ արվեստագիտության բեկնածու Լուսինե Սահակյան, Հայ երաժշտական ֆուլկորագիտության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ դասախոս, արվեստագիտության բեկնածու Նունե Աբանասյան, Կոմպոզիտորական ամբիոնի ամբիոնի վարիչ՝ դասախոս, արվեստագիտության բեկնածու Արթուր Ավանեսյան, Օպերային դիրիժորության և խմբավարության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Հովհաննես Միրզոյան, Օպերային պատրաստման ամբիոնի ամբիոնի վարիչ՝ ղոցենտ Կարեն Լավյան, Մեներգեցողության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ պրոֆեսոր Գայանե Գեղամյան, Հայոց ժողովրդական գործիքների և երգեցողության ամբիոնի ամբիոնի վարիչ՝ Արզա Բականյան, Եստրադային-ջազային ամբիոնի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Նարինե Զարիֆյան, Հունամիտար գիտությունների ամբիոնի ամբիոնի վարիչ, ղոցենտ, արվեստագիտության բեկնածու Սոնա Պողապտյան: Եվ այլ աշխատանքային հարցերով ընթանում էր գիտական խորհուրդը:

Հատուկ շնորհավորանքի արժանացան ԵՊԿ պրոֆեսոր Յուրի Դավթյանն իր 90-ամյակի առթիվ (ով միտսին հարգելի պատճառով մերկա չէր) և Ա. Խաչատրյանի անվ. 15-րդ միջազգային մրցույթում հաղթած կոմպոզիտորական ամբիոնի ասիստենտ Հովհաննես Աղաբաբյանն ու պրոֆեսոր Ռոզա Թանդիլյանը (որպես մասնագիտական դասարանի ղեկավարի):


Վոնստանտին Պետրոսյանը Հայաստանի կոմպոզիտորների միության արտասահմանյան բաժանմունքի համանախագահն է, ԱՄՆ-ի Ռոդ Այլենդ նահանգում գործող «Հայկական երաժշտական փառատուն» հայկական մշակութային կազմակերպության ղեկավարը, Փրովիդենսի (ԱՄՆ) Մուրթ Սահակ-Մետրոպոլիտանի Կոմպոզիտորական և երաժշտական տնօրենը, Ռոդ Այլենդի հայկական երգչախմբի և Մասաչուսեթս նահանգի Մեծ Վուսթերի հայկական երգչախմբի հիմնադիրը և ղեկավարը, Բոստոնի «Երևան» երգչախմբի և նվագախմբի գեղարվեստական ղեկավարը և գլխավոր դիրիժորը, Ամերիկայի հայկական թանգարանի (Բոստոն)



Վոնստանտին Պետրոսյան Ընդհանուր Զանգակ գրադարանի տնօրենը Երևանում, փ. Արվարյան մասնաճյուղում



հոգևոր երաժշտության խորհրդի անդամը և երաժշտական ծրագրերի համակարգողը: Կոնստանտին Պետրոսյանը ծնվել է 1946 թ. Երևանում: 1973-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան, պրոֆեսոր Գրիգոր Եղիազարյանի մասնագիտական դասարանը: 1976-1985 թթ. դասավանդել է Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում: 1976-1980 թթ. եղել է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորը: 1976 թվականից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է, 2003-ից՝ Հայկական երաժշտական համաժողովի անդամ:



կան կոնսերվատորիան, պրոֆեսոր Գրիգոր Եղիազարյանի մասնագիտական դասարանը: 1976-1985 թթ. դասավանդել է Ռ. Մելիքյանի անվ. ուսումնարանում: 1976-1980 թթ. եղել է Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի դիրիժորը: 1976 թվականից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է, 2003-ից՝ Հայկական երաժշտական համաժողովի անդամ:

Տպագրվել է Կոնստանտին Պետրոսյանի կյանքի և գործունեության մասին Մարգարիտ Ռուխկյանի գիրքը ՀՀ ԳԱ ԱԻ կողմից Պատասխանատու խմբագիր, փոստնոթեն արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյան և բարձրագույն դասընթացի արվեստագիտության բեկնածու Լիլիթ Արտեմյանի: Գրքի շնորհանդեսը, բացի ՀԿՄ-ից տեղի ունեցավ նաև «Զանգակ» հրատարակչատանը (Մախաձեռնող՝ հրատարակիչ, երաժշտագետ ՀԿՄ վարչության անդամ՝ Գ. Կ. Շաղապյան): Իսկ իր ստեղծագործությունները անձամբ փոխանցեց կոմպոզիտորը ԵՊԿ-ի Կոնստանտին Սարաջևի անվ. գրադարանին: Այն իրականացվել է «Կոմիտաս» հրատարակչությունում:


Նյութը պատրաստեց՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հրատարակվել է Աննա Բաբաջանյանի «Անուրջներ» կոմպոզիտորական փոխադրված երկու դաշնամուրի համար, հեղինակն է՝ արվեստի պատմաբան Արտյոմ Անդրեասյանը: «Անուրջներ»-ը Ա. Բաբաջանյանի վերջին ավարտուն ստեղծագործություններից է, որի բնագիրը մինչ օրս չի հրատարակվել: Սույն խմբագրությունը ներառում է ծավալուն ներածություն և ծանոթագրությունների բաժին, որտեղ ներկայացվում են անհրաժեշտ բնագրագիտական տվյալները (օգտագործված աղբյուրների նկարագրում, ինչպես նաև՝ առավել ակնառու տարրերից (հայերեն և ռուսերեն լեզուներով): Հասցեագրվում է դաշնակահարներին, արվեստի պատմաբաններին, ինչպես նաև երաժշտասեր լայն հասարակությանը: Նույնպես գիրքը հրատարակվել է Աննա Բաբաջանյանի հիշատակին միջազգային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (Մախագահ՝ Արա Բաբաջանյան) և կոմպոզիտոր, դիրիժոր, ՀՀ ժողովրդական արտիստ Մելիք Մավիսակալյանի երաժշտավորությամբ «Կոմիտաս» հրատարակչությունում: Խմբագիրն է պրոֆեսոր Անահիտ Ներսեսյանը, հրատարակիչ և պատասխանատու խմբագիրը՝ Ռուզաննա Եսայանը:



Հեղինակային հրատարակությամբ, 2015 թ. լույս է տեսել «Նովալիս Դերոյան/Երկեր» ժողովածուն, կազմողը և խմբագիրն է արվեստագիտության բեկնածու Ծովինար Մովսիսյանը: Ընդգրկված են հայ երաժշտագիտական մտքի վաստակաշատ ներկայացուցիչներից մեկի՝ արվեստագիտության բեկնածու, պրոֆեսոր Նովալիս Վարադադատի Դերոյանի երաժշտագիտական և գրական-հրապարակախոսական ելույթները: Ժողովածուում առաջին անգամ ամբողջությամբ ընթերցողին է ներկայացվում Դերոյանի հիմնադրու տեսական ուսումնասիրությունը՝ նոր հորիզոններ բացահայտելով երաժշտության գեղարվեստական ընկալման խնդրի ասպարեզում: Նովալիս Դերոյան - մտավորականի նկարագիրն առավել ամբողջական է դառնում նրա ինքնակենսագրական վիպակի և գրական-հրապարակախոսական ուսումնասիրությունների շնորհիվ: Գիրքը հասցեագրված է երաժշտագետներին, ինչպես նաև իրազեկ ընթերցողներին:



Տպագրվել է Ծովինար Չալոյանի «Գեղագիտության պատմություն» գրքի 2-րդ հրատարակությունը՝ լրացված (2018 թ.): Ներկայացվում է գեղագիտության պատմությունը սկզբնական շրջանից մինչև XIX դար՝ շեշտը դնելով համամարդկային այն արժեքների վրա, որոնք ձևավորվել են՝ հենվելով առաջընթացի, ժամանակակիցության և քաղաքացիության վրա: Ձեռնարկը ունի միտումը՝ մեկնաբանել գեղագիտության պատմության հիմնական շրջանները, արժեքները՝ հաստատելով դրանց օրինաչափ կապը արվեստի և փիլիսոփայության հետ: Գիրքն ամփոփում է այն դասախոսությունները, որոնք հեղինակը կարդացել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ուսանողներին: Տպագրությունն իրականացվել է «Ամտարես» հրատարակչատանը, մասնագիտական խմբագիրն է՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լաուրա Մուրադյանը:



ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՍՆՈՐ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՐԱԳԵՐ ԿԱՑԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱԶՅԱՆ, ԳՈՂԱՐ ՇԱԳՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱՅՈՅԱՆ
Թղթարկման պատասխանատու՝ ԳՈՂԱՐ ՇԱԳՅԱՆ
Խմբագիրներ՝ ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (հայ),
ՍՈՖՅԱ ԱՅՆԱՌԻՅԱՆ (ռուս.)
ԼԻՍԱ ԵՐԻՎԱՆՅԱՆ (հայ, ռուս.),
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՂԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համաժողով է հեղինակների կարիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Ծավալը 16 էջ: Ստորագրված է 28.08. 2019:
Գինը 400 դրամ: Տպաքանակը՝ 101:
Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ՁԼԱ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միայն հատկապես պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունը նշված հասցեով.
0001, ք. Երևան, Սայաթ-Նուխ 1ա
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-
Yerevan-State-Conservatory-996490150508214/

